ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՇԱՏԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի 2023-2028ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 4

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1.1 Հաստատության շենքային պայմանների վերլուծություն.....9

1.2 Հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն.....10

1.3 Հաստատության համագործակցությունը կառավարման մարմնի, տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.....11

1.4Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը.....25

1.5Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորորարությունների ներկայացումը 30

1.6Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը....34

1.7 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծությունը..37

1.8 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը.....39

1.9 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շողումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից.....40

2. ՄԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

2.1 Զարգացման ծրագրի նպատակներն ու ակնկալվող արդյունքները.....42

2.2 Ուսումնական հաստատության շենքային պայմանները, նյութատեխնիկական բազա.....47

2.3 Մանկավարժների մասնագիտական որակավորման բարձրացման միջոցառումներ.....49

2.4 Կրթության որակի բարձրացման միջոցառումներ.....50

2.5 Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացման միջոցառումներ.....52

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Կրթական կարիքների նկարագրությունը.....54

3.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին.....56

3.3Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին.....57

4.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....61

4.1Կրթության որակի, ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման գնահատման չափանիշներ.....62
4.2 Բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայրի գնահատման չափանիշներ....64

4.3Աշխատակազմին արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ապահովման գնահատման չափանիշները.....67
4.4 Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներ.....68
4.5 Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշներ.....71

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ, ԴՐԱՆՔ ՄԵՂՄՈՂ ԿԱՄ ՉԵԶՈՔԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ.....74

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ.....77

6.1 Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարողականի հաշվետվության օրինակներ.....79

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....86

ՀԱՎԵԼՎԱԾ.....87

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Ի՞նչ ասել է՝ ունենալ որակյալ, աջակցող, մասնակցային կրթական համակարգ: Սա, թերևս, այն կարևորագույն նպատակն է, որին ընդառաջ են գնում մեր պետությունը, հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական ու վարչական աշխատողները, սովորողները, նրանց ծնողները, շահառու այլ խմբեր: Ժամանակի կրթական միտումներին համապատասխան կրթությունը, որտեղ գերակայում են սովորողների լավագույն շահերը, մեր երկրի ապագայի հաջողության հենասյունն է, ուստի վերը բերված նպատակի իրագործումը պետք է դառնա համապետական նշանակության հիմնահարց: Դպրոցաշինությունը, կրթության որակի բարձրացումը, հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման արդյունավետ իրականացումը, դպրոցը նորագույն տեխնոլոգիաներով, միջոցներով և կարողունակ կադրերով համալրելուն ուղղված գործողությունները պետք է անվերապահորեն իրականություն դառնան. չէ՞ որ այստեղ է երեխան դառնում պատասխանատու և կարողունակ աշակերտ, այստեղ է ճանաչում աշխարհը, այստեղ է հիմնականում ձեռք բերում ազգային ու համամարդկային արժեքներ, իրավագիտակցություն, սոցիալական պատասխանատվություն, ինքնակառավարման և ինքնավերահսկման հմտություններ: Հենց այս հանգամանքներն են առավել կարևոր ու առանցքային դարձնում լավ ու ժամանակակից դպրոց ունենալու նպատակի՝ օր առաջ իրականացումը: «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակել ենք՝ առաջնորդվելով վերը բերված առաքելության անվերապահ կարևորմամբ, փորձել ենք զերծ մնալ մեր խոսքն ավելորդ պաթոսով և չափազանցություններով ծանրաբեռնելուց, սահմանել ենք հստակ ու թիրախային նպատակներ՝ առաջադրելով դրանց իրականացման կոնկրետ խնդիրներ, ժամկետներ, պատասխանատուներ, մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներ: Կարևոր ենք համարել անդրադառնալ նաև զարգացման ծրագրի իրականացման հնարավոր խոչընդոտներին, ռիսկերին՝ սահմանելով դրանց մեղմմանն ու չեզոքացմանն ուղղված գործողություններ: Մեր կողմից սահմանվել են նաև ուսումնական հաստատության զարգացման ծրագրի գնահատման չափանիշներն ու վերահսկողության մեխանիզմները, որոնք, մեր համոզմամբ, անչափելի կարևոր

գործոններ են, որոնցով էլ պայմանավորված է մեր գերագույն նպատակի իրագործումը:

Այսպես, ՀՀ Վայոց ձորի մարզի «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22 սեպտեմբերի 2022 թ. N 35-Ն հրամանը՝ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի հունվարի 15-ի n 16-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին, նաև՝ զարգացման ծրագրի փորձաքննության չափանիշները, որոնք հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023թ. ապրիլի 18-ի N 399-Ա հրամանով: Այսպիսով, հիմք ընդունելով դպրոցում իրականացվող ներքին և արտաքին գնահատման չափանիշները, մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և վերջիններիս ծնողների հետ իրականացված քննարկումները, ոլորտին վերաբերվող մի շարք իրավական ակտեր, մշակվել է «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը, որը դպրոցի վարած քաղաքականության հիմքն է, այսօրվա տքնաջան աշխատանքի ուղեցույցը, նվաճումներով ու ձեռքբերումներով ապագայի տեսլականը: Զարգացման ծրագիրը նախնական աշխատանքային փաստաթուղթ է, որում սահմանված են՝

- դպրոցի ներկայիս վիճակի վերլուծությունը, կարիքները,
- կարիքների բավարարմանն ուղղված նպատակները, խնդիրները, ակնկալվող արդյունքները,
- կարիքները բավարարելու համար անհրաժեշտ միջոցները, ռեսուրսները, գործողությունները, պատասխանատուներն ու ժամանակացույցը,
- կարիքների բավարարման ընթացքում հանդիպող ռիսկերը, դրանց մեղմմանը, չեզոքացմանն ուղղված քայլերը, գործիքակազմը,
- կարիքների բավարարման գնահատման չափանիշներն ու վերահսկողության մեխանիզմները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության:
- Դպրոցը անվանումն է Վայոց Ձորի մարզի «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, պետռեգիստրի վկայականը՝ տրված 22.01.65.210.00432 N03 Ա058355 ներդիրներ 001,002,003 և հարկային կոդը 08903519:
- Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված պետռեգիստրի կողմից 09.10.2017 թիվ 68 որոշմամբ:
- 2014 թվականից դպրոցում գործում է նախակրթարան, 2015 թվականից իրականցնում է ներառական կրթություն, 2016 թվականից դպրոցում իրականացվում է ինժեներական կրթություն՝ գործում է «Արմատ» ինժեներական լաբորատորիա:
- Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներ, «ՀՀ աշխատանքային օրենսգիրք», դպրոցի կանոնադրություն, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներ, ներքին իրավական ակտեր, նորմատիվ այլ փաստաթղթեր:
- Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումն իրականացվում է սահմանված կարգով:
- Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն):
- Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով:
- Դպրոցի գործունեության փաստաթղթերի վարումը թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարում էլեկտրոնային ձևաչափի:
- Դպրոցում առկա են ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության

ենթակա անհրաժեշտ փաստաթղթերը. դրանք լրացվում (գործածվում) են սահմանված կարգի համաձայն:

- Դպրոցում ներքին վերահսկողության կազմակերպման նպատակով վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր:
- Ընթացիկ գործունեությունը կանոնակարգելու համար դպրոցն իր իրավասության սահմաններում մշակում և գործածում է նաև այլ փաստաթղթեր:

Դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալ կրթական ծրագրերը՝

- Տարրական հանրակրթական
- Հիմնական հանրակրթական
- Միջնակարգ հանրակրթական



Դպրոցի ներկայիս շենքը տիպային է, կառուցվել է 1972 թվականին, բաղկացած է 2 մասնաշենքից: Գլխավոր մասնաշենքը եռահարկ է, իսկ մյուսը՝ մեկհարկանի: Դպրոցի շենքը հիմանորոգվել է 2007-2008թթ.-ին: Դպրոցն աշխատում է մեկ հերթով, հնգօրյա աշխատանքային ռեժիմով, դպրոցի շրջանավարտների մեծ մասն ուսումը շարունակում են բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Դպրոցն ունի՝

ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ
Ինֆորմատիկայի կաբինետ	1
Ռազմագիտության կաբինետ	1

Համակարգչային կաբինետ	1
Գրադարան	1
Սպորտային դահլիճ	1
Դասասենյակ	18
Լաբորատորիա	1
Վարչական սենյակ	2
Օտար լեզվի առարկայական կաբինետ	1
Պահակակետ	1
Արհեստանոց	1
Սանհանգույց	5

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1.1 Հաստատության շենքային պայմանների վերլուծություն

Ուսումնական հաստատության շենքային բարվոք ու սահմանված չափանիշներին համապատասխանող շենքային պայմանների առկայությունը ոչ միայն համայնքի, դպրոցի առավելությունն ու ձեռքբերումն է, այլ նաև՝ պետության: Հենց շենքային պայմաններն են խոսում պետության՝ կրթության նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին, ուստի անվտանգ, հարմարավետ շենքային պայմաններով ուսումնական հաստատություն ունենալն առաջնահերթություն է, սովորողին մոտիվացնելու, դեպի կրթություն շահագրգռելու առաջնային գործոն: Այս համատեքստում կարևոր է, որ հնարավոր ու հասանելի ռեսուրսներն անպայման ուղղվեն՝ բարեկարգ, գեղագիտական ու անվտանգ շենքային պայմաններ ունենալուն:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Լուսավոր, մաքուր դասասենյակներ, որտեղ նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում է առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին	Դպրոցը չունի ճաշարան, սովորողներին տրամադրվում է չոր սնունդ
Դպրոցն ունի հարուստ գրադարան	Դասասենյանկները, սանհանգույցները, միջանցքներն ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք
Սպորտդահլիճի և հանդիսությունների սրահի վերանորոգումն ընթացքի մեջ է: Շինարարական աշխատանքներն իրականացնում է TCONSTRUCTION կազմակերպությունը, որն աշխատանքները սկսել է 2022 թվականի ապրիլի 25-ից	Վերանորոգման կարիք ունի ջեռուցման համակարգը
Բակը ընդարձակ է, բարեկարգ	Դպրոցը չունի հրաձգարան

Մուտքի մոտ առկա է թեքահարթակ	Դպրոցը չունի ներառական կրթության համար առանձին սենյակ
Դպրոցն ունի լաբորատորիա, համակարգչային սենյակ, ռազմագիտության կաբինետ	Գլխավոր մասնաշենքը նորոգման կարիք ունի
Դպրոցն ունի թվով 5 սանհանգույց	
Դպրոցի միջանցքներում փակցված են տարհանման պլան-սխեմաներ, շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր	
Դպրոցը չունի ինտերնետային կապի խնդիր	

1.2 Հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն

Ժամանակակից կրթության պահանջներին համապատասխան կրթական միջավայրն այսօր դժվար է պատկերացնել առանց հարուստ նյութատեխնիկական բազայի: Այս ռեսուրսն ապահովում է ուսումնական գործընթացի զննականությունը, նպաստում սովորողների գործնական կարողությունների զարգացմանը, ուսումնական նյութն առավել պատկերավոր ընկալելուն, ուստի դպրոցի համար առաջնային և կարևորագույն նպատակ կարելի է սահմանել նյութաթեխնիկական բազայի ձեռքբերումը, համալրումն ու թարմացումը: Անշուշտ, բազմաթիվ դեպքերում հենվելով սաների և մանկավարժական համակազմի ստեղծարարության վրա՝ հնարավոր է լինում ինքնաշեն միջոցներով համալրել առկա բացերը, սակայն ակնհայտ է, որ դա բավարար չէ: Հատկապես խնդրահարույց է բնագիտական առարկաների դասավանդման համար նախատեսված ուսումնատեխնիկական և ուսումնանյութական ռեսուրսների, համակարգիչների, օժանդակ սարքավորումների վիճակը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցն ունի համակարգչային կաբինետ, ինտերնետ կապ:	Դպրոցը չունի ճաշարանի համար նախատեսված գույք, սարքավորումներ, պարագաներ

Դպրոցում գործում է Արմատ ինժեներական լաբորատերիա	Լաբորատորիան չունի ժամանակակից և նոր սարքավորումներ, նյութեր
Դպրոցի միջանցքներում փակցված են ճանաչողական պատի թերթեր, ցուցապաստառներ	Դպրոցի սպորտդահլիճն ունի մարզագույքի թարմացման կարիք
Դպրոցի գրադարանը համալրված է գեղարվեստական գրքերով, քարտեզներով, մանկավարժների համար մեթոդական ձեռնարկներով	Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազան ունի թարմացման, համալրման կարիք
Տարրական դասարանների դասասենյակները համալրված են ուսումնաօժանդակ նյութերով, դիդակտիկ և զննական պարագաներով	Դպրոցն ունի համակարգիչների, օժանդակ սարքերի ձեռքբերման կարիք
Դպրոցի նախակրթարանն ունի բավարար չափով դիդակտիկ նյութեր, զննական պարագաներ	Դպրոցը չունի ներառական կրթության համար առանձին սենյակ

1.3Հաստատության համագործակցությունը կառավարման մարմնի, տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ



- «Պետական ուսումնական հաստատությունն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ»[1]:
- «Ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ, որոնց ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Ուսումնական հաստատության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև այլ խորհրդակցական մարմիններ՝ հոգաբարձուների և այլ խորհուրդներ»[2]:

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմինը

Ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը ուսհաստատության խորհուրդն է, որի գործառույթներն ամրագրված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում և ուսումնական հաստատության կանոնադրության մեջ: «Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում գործում է միացյալ կոլեգիալ կառավարման խորհուրդ՝ «Շատինի միջնակարգ դպրոց», «Սալլի հիմնական դպրոց» և «Հորսի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասնակցությամբ, որն ունի 19 անդամ: Հաստատության տնօրենը միացիալ կոլեգիալ կառավարման մարմնի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով: Հաստատության կոեգիալ կառավարման մարմնի նիստերն արձանագրվում են: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է համագործակցային փոխըմբռնման գործելաոճով: Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Խորհրդի աշխատանքները կազմակերպում է խորհրդի նախագահը՝ խորհրդի մնացած անդամների և հաստատության տնօրենի աջակցությամբ: Կառավարման կոլեգիալ խորհրդի գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով՝

[1] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 10, կետ 3:
[2] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 10, կետ 5:

- աջակցել է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը,
- վերահսկել է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը,
- լսել է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տվել եզրակացություն,
- հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոններ:

1	Շատինի մ/դ	Խաչատրյան Գոհար	Մարզպետի
2	Հորսի հ/դ	Դավթյան Արմեն	Մարզպետի
3	Սալլիի ն/դ	Մարտիրոսյան Սամվել Շատին	Մարզպետի Համայնքի ղեկավարի ներկ.
4		Սարգսյան Մարտին Սալլի	Մարզպետի Համայնքի ղեկավարի ներկ.
5		Թոչարյան Սաթենիկ Հորս	Մարզպետի Համայնքի ղեկավարի ներկ.
6		—Ռուզաննա Առաքելյան Շատին	Մանկխորհրդի Շատին
7		Գրիգորյան Սյուզաննա Շատին	Մանկխորհրդի Շատին
8		Մարտիրոսյան Ասյա Շատին	Ծնողխորհրդի Շատին
9		Բարսեղյան Մելինե Շատին	Ծնողխորհրդի Շատին
10		Ղազարյան Հայկազ Սալլի	Մանկխորհրդի Սալլի
11		Խաչատրյան Լիանա Սալլի	Մանկխորհրդի Սալլի
12		Թարվերդյան Մերի Սալլի	Ծնողխորհրդի Սալլի
13		Միհաջյան Մելինե Սալլի	Ծնողխորհրդի Սալլի
14		Սիմոնյան Փառանձեմ Հորս	Մանկխորհրդի Հորս
15		Միհաջյան Սուսաննա Հորս	Մանկխորհրդի Հորս
16		Ղազարյան Մարիա Հորս	Ծնողխորհրդի Հորս
17		Ղազարյան Բրիստինե Հորս	Ծնողխորհրդի Հորս
18		Ղահրամանյան Տիգրան	ՀՀ ԿԳՄՍ նախարարի
19		Դավթյան Գվիտոն	

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Կառավարման խորհրդի անդամները կատարում են իրենց լիազորությունները	Նկատվում է արագ արձագանքման պակաս խորհրդի անդամների շրջանում
Խորհրդի անդամները իրենց գործունեությունը իրականացնում են՝ առաջնորդվելով դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգով	Որոշ անդամների կողմից նկատվում է ձեռնպահ վերաբերմունք
Խորհրդի նիստերն անց են կացվում սահմանված կարգով և արձանագրվում են	Որոշ անդամների մոտ նկատվում է համագործակցության և տարակարծության պակաս

Խորհուրդը բաց և թափանցիկ կերպով քննարկում է ուսումնադաստիարակչական, վարչատնտեսական և այլ ոլորտներին վերաբերող հարցեր	Որոշ անդամների մոտ նկատվում է իրավական ակտերի ոչ բավարար իմացություն

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը բաղկացած է 20 անդամից: Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում:

Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով[3]: Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է հանրակրթական դպրոցի տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը), որն ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է[4]:

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդն իր գործառույթներն իրականացնում է բավականին արդյունավետ և պատասխանատու կերպով՝ քննարկելով մի շարք առանցքային հիմնահարցեր, այդ թվում՝

- քննարկել է հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը,
- քննարկել է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի դիմումի համաձայն,
- քննարկել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ,

[3] «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 76:

[4] «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 81

- քննարկել է ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության արտադատարանական որակի, նրանց աշխատանքների կազմակերպման, խմբակների, երկարօրյա խմբերի ստեղծման հարցերը,
- որոշումներ է ընդունել հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացրել է տնօրենին՝ հաստատման մասին և այլն:

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մեթոդական միավորումները

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ձևավորվող առարկայական մասնախմբերը նպատակ ունեն համակարգել և կանոնակարգել մեթոդական աշխատանքները դպրոցում: Դրանք մոտ կամ հարակից առարկաներից կազմված առարկայական մասնախմբեր են, որոնք իրենց նպաստն են բերում կրթության որակի բարձրացմանը, մեթոդապես հագեցած, բովանդակային ու դինամիկ ուսումնական գործընթաց ունենալուն: Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսը առնվազն մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են[5]: Մեթոդական միավորումների շրջանակներում իրականացվող աշխատանքները նպատակ ունեն.

- Մանկավարժական օրինակելի փորձի փոխանակման համար ստեղծել նպաստավոր պայմաններ:
- Մեթոդամանկավարժական, ուսումնադաստիարակչական հարցերի, արտադասարանական, արտադպրոցական միջոցառումների վերաբերյալ իրականացնել քննարկումներ:
- Քննարկել տարաբնույթ ուսումնական հարցերը, մշակել մեթոդական զեկուցումներ՝ միտված ուսուցման որակի բարելավմանը:
- Քննարկել ուսումնական գործընթացի վերաբերյալ այլ հարցեր:

Հաստատությունում գործում են թվով 4 առարկայական մասնախմբեր՝

[5] «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 95



«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առարկայական մասնախմբերի գործունեությունը միտված է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, որի առանցքում կրթության որակի բարելավումն է, կրթական նորարարությունների տեղայնացումը ուսումնական գործընթացում: Միևնույն ժամանակ՝ առարկայական մասնախմբերի աշխատանքների կենտրոնում ուսուցիչների փոխգործակցության ապահովումն է, ինչը նպատակ ունի համատեղ ջանքերով խթանել ուսուցիչների ստեղծարարության, նորարարության, նախաձեռնության զարգացումը, հնարավորություն ստեղծել՝ միասնական աշխատելու, ինտեգրված դասեր, արտադպրոցական և արտադասարանային գործունեություն պլանավորելու, խնդրահարույց իրավիճակների հաղթահարման ելքեր որոնելու: Վերլուծելով նիստերի գումարման հաճախականությունը և քանակը վերջին 5 տարիների ընթացքում՝ կարելի է նշել որ ամեն մեթոդմիավորում միջին հաշվարկով գումարում է տարեկան 11 նիստեր (հերթական և արտահերթ): Մեթոդմիավորումների աշխատանքները կազմակերպվում են մեթոդմիավորման նախագահի տարեկան աշխատանքային պլանով, որը ուսումնական տարվա սկզբին հավանության է արժանանում մանկավարժական խորհրդի կողմից և գործածության մեջ է դրվում հաստատության տնօրենի հերթական հրամանով: Հաստատությունում կիսամյակային պարբերականությամբ կատարվում է մեթոդական միավորումների կողմից կազմակերպված աշխատանքների հաշվետվողականություն:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Մանկավարժական խորհրդի և մեթոդական միավորումների նիստերն անցեն կացվում սահմանված կարգով և արձանագրվում են	Որոշ մանկավարժներ պասիվ են, հանդես չեն գալիս առաջարկություններով, չեն ցուցաբերում նախաձեռնողականություն
Մանկավարժական խորհրդի անդամների գերակշիռ մասը բավականին ակտիվ մասնակցում են խորհրդի աշխատանքներին, հանդես են գալիս առաջարկություններով	Որոշ մանկավարժների շրջանում նկատելի է իրավագիտակցության պակաս, պաշտոնեական պարտականությունների ժամանակավրեպ կատարում
Մանկավարժական խորհրդի նիստերի ընթացքում հստակ պահպանվում է օրակարգային քննարկումը, մանկավարժները համագործակցում են՝ մասնագիտական էթիկայի կանոնները պահպանելով	Մեթոդական միավորումների աշխատանքների նկատմամբ որոշ մանկավարժներ ցուցաբերում են անտարբերություն, պասիվություն
Մեթոդմիավորումների նիստերին հիմնականում բոլոր մանկավարժական աշխատողներն ակտիվ են, հանդես են գալիս առաջարկություններով, մասնագիտական ու մեթոդական զեկուցումներով	Սահմանափակ ռեսուրսների առկայությունը խաթարում է մի շարք մանկավարժական նախաձեռնությունների և ծրագրերի ի կատար ածմանը
Մեթոդական միավորումների շրջանակներում մեծ աջակցություն է ցուցաբերվում սկսնակ կամ ոչ փորձառու ուսուցիչներին	
Մանկավարժական խորհրդի անդամների միջև առկա է կառուցողական և նպատակային համագործակցություն, որն ուղղված է փորձի փոխանակմանը, փոխօգնությանն ու դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ամրակայմանը	

Ուսումնական հաստատությունը շատ է կարևորում ծնողական համայնք-դպրոց արդյունավետ համագործակցության շարունակականության ապահովումը: Ծնողական խորհուրդն ու ողջ ծնողական համայնքը հիմնականում կազմակերպված է, մտահոգ թե' դպրոցի զարգացմամբ, թե' իրենց երեխաների անհատական հաջողություններով: Ծնողական խորհրդի անդամների թիվը 12 է: Ծնողների գերակշիռ մասը բարեկիրթ է, ցուցաբերում է անվերապահ հարգանք դպրոցի ու մանկավարժական աշխատողների նկատմամբ, ունի ծնողավարական հմտությունների բարձր մակարդակ, գիտակցում է օրենքով սահմանված իր պարտավորություններն ու իրավունքները:

Սովորողի ծնողն իրավունք ունի՝

- համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով,
- մասնակցելու ուսումնական հաստատության ներքին գնահատմանը,
- մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով[6]:

Հաստատության ծնողական խորհրդի աշխատանքները կազմակերպվում են ծնողական ժողովների միջոցով՝ համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի: Հրավիրվում են դասարանական ժողովներ՝ առնվազն չորս անգամ, համադպրոցական ժողովներ՝ առնվազն երկու անգամ: Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով աշխատողի պաշտոնային պարտականությունները և աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատանքի ուղղությունները: Ծնողական խորհրդի աշխատանքը վերահսկում է հաստատության տնօրենի դաստիրակչական աշխատանքների գծով տեղակալը: Գումարված նիստերն արձանագրվում են ծնողական խորհրդի քարտուղարի կողմից: Ծնողական համայնքում առկա հնարավոր խնդիրներն արագ և օպերատիվ լուծում են գտնում: Անհատական զրույցների, մանկավարժահոգեբանական աջակցության, անհրաժեշտության պարագայում հաճախակի տունայցերի միջոցով դպրոցը

[6] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 2,

փորձում է լուծել ծնողների խնդրահարույց գործողությունների հետևանքավ առաջացած լրջագույն խնդիրները՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով նաև պատասխանատու այլ մարմինների:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ծնողական խորհրդի անդամները կատարում են իրենց լիազորությունների շրջանակներով վերապահված պարտականությունները	Առկա են անտարբեր, ծնողավարական ցածր հմտություններով ծնողներ
Դպրոցն ամեն կերպ ընդառաջ է գնում ծնողական համայնքի հետ սերտ համագործակցությանը՝ ժամանակին անց են կացվում ծնողական ժողովներ, հաշվի է առնվում ծնողների կարծիքը	Առկա են իրավագիտակցության պակաս ունեցող ծնողներ
Անհրաժեշտության պարագայում՝ մանկավարժական աշխատողները ծնողների հետ անցկացնում են իրազեկողական, աջակցման միջոցառումներ	Առկա են սոցիալական ու քաղաքացիական պատասխանատվության ցածր մակարդակ ունեցող ծնողներ
Դպրոցն ամեն կերպ փորձում է բարձրացնել ծնողական խորհրդի դերն ու մասնակցությունը դպրոցի կառավարման և ուսումնադաստիարակչական գործընթացներին	

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտական խորհուրդը

Դպրոցի աշակերտական խորհրդի աշխատանքները ևս կազմակերպվում են նիստերի միջոցով: Այն սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն սովորողական խորհուրդն է, որը ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Վերլուծելով նիստերի գումարման հաճախականությունը և քանակը վերջին 5 տարիների ընթացքում՝ կարելի է նշել, որ

խորհուրդը միջին հաշվարկով գումարում է տարեկան 2-4 նիստ՝ խորհրդի աշխատանքային պլանին համապատասխան: Աշակերտական խորհրդի աշխատանքը վերահսկում է հաստատության դաստիրակչական աշխատանքների գծով տեղակալը: Հաստատության աշակերտական խորհուրդն ունի 14 անդամ: Խորհուրդն ակտիվորեն մասնակցում է հաստատության կառավարմանը, ուսումնադաստիարակչական գործընթացին: Սովորողների ինքնավարությունն ու ակտիվ մասնակցությունն ուսհաստատության կառավարման գործընթացին ամրագրված է նաև հանրակրթական համակարգից պետական պատվերի պահանջներում:

Սովորողների ինքնավարության հիմնական խնդիրներն են՝

1) համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը.

2) ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը նպաստելը.

3) հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը.

4) սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը օժանդակելը.

5) սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը օժանդակելը և այլն[7]:

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սովորողների թիվն 2023-2024 ուստարվա ընթացքում

Անվանում	Քանակ
Աղջիկ սովորողներ	88
Տղա սովորողներ	102
ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը (ըստ վկայագրման. թեթև,միջին, խորը, ծանր)	4 (3-միջին, 1-թեթև)
Նախակրթարան	12

[7] ՀՀ Կրթության և գիտության նախարարի՝ 17 մայիսի 2011 թ. N 571-Ն հրաման:

Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող սովորողներ	0
Սովորողների ընդհանուր թիվը	189

2022-2023 ուստարվա 9-րդ դասարանի Ավարտական քննություններից անբավարար ստացածներ	0
2022-2023 ուստարվա 12-րդ դասարանի Ավարտական քննություններից անբավարար ստացածներ	0
2022-2023 ուստարվա 12-րդ դասարանի շրջանավարտներից ԲՈՒՀ դիմողներ	9
2022-2023 ուստարում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ	0
2022-2023 ուստարում տարեկան 120-200 ժամ բացակայած աշակերտների թիվը	0
2022-2023 ուստարում տարեկան 200-ից ավելի ժամ բացակայած աշակերտների թիվը	0
2022-2023 ուստարում փոխադրական դասարանների գերազանցիկների թիվը	21
2022-2023 ուստարում առարկայական օլիմպիադաներ (մասնակիցների թիվ դպրոցական փուլում բոլոր առարկաներից)	25
Օլիմպիադայի Հանրապետական փուլ	3-րդ կարգի դիպլոմակիր

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Աշակերտական խորհուրդը դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցում է դպրոցի կառավարմանը	Աշակերտական խորհուրդը երբեմն ունենում է անհրաժեշտ ռեսուրսների և միջոցների պակաս
Աշակերտական խորհուրդն ակտիվորեն հանդես է գալիս նախաձեռնություններով, առաջարկություններով	Խորհրդի դերը դպրոցում ունի վերարժևորման և առավել բարձրացման կարիք
Աշակերտական խորհուրդն իրականացնում է ինքնավարության օրեր, պատրաստում է ցուցապաստառներ, կազմակերպում համադպրոցական և համայնքային նշանակության միջոցառումներ	Խորհրդի նախաձեռնություններն ու գործողությունները երբեմն կրում են պասիվ բնույթ
Դպրոցում աշակերտական խորհուրդն ունի անվերապահ ձայնի իրավունք, մշտադիտարկում և բացահայտում է հնարավոր խնդիրներ, բռնության, խտրականության և օտարման հնարավոր դեպքեր և տեղեկացնում տնօրենությանը՝ փորձելով համատեղ լուծումներ գտնել	

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի հետ

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը սերտորեն համագործակցում է նաև ՏԻՄ-հետ: Այս համատեքստում համայնքի ղեկավարն իր իրավասությունների շրջանակներում անվերապահորեն կատարում է իր գործառույթները՝

1) աջակցում է համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ օրենքով սահմանված կարգով.

2) իրականացնում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ[8][9]:

Դպրոցն իր հերթին կարևոր է համարում ՏԻՄ-ի հետ բաց ու թափանցիկ համագործակցությունը՝ նպաստելով հարաբերությունների խորացմանն ու ընդլայնմանը: Համատեղ իրականացվում են համայնքային նշանակության միջոցառումներ, նշվում են պետական և ազգային տոներ՝ այդպիսով փորձելով ամրապնդել նաև դպրոց-համայնք կապը: Սերտ ու բարեկամական է նաև դպրոցի կապը համայնքի հետ: Հիմնականում համայնքի բնակիչներն ընդառաջ են գնում դպրոցին օգնելու, աջակցելու կարևոր առաքելությանը:

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի համագործակցությունը կրթության կառավարման մարմնի, շահառու կազմակերպությունների հետ

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը կարևորում է նաև համագործակցությունը Կրթության կառավարման մարմնի և շահառու կազմակերպությունների հետ: Նշված համագործակցությունը բազմաբևեռ է և ունի մեծ ազդեցություն ուսումնական հաստատության կառավարման և ուսումնական գործընթացի արդյունավետության բարձարման վրա: Դպրոցը շահագրգիռ է Վայոց ձորի մարզպետարանի կրթության վարչության, ԿԳՄՍ-ի ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի ՏՄԱԿ-ի, Վորլդ Վիժն Հայաստանի, ԿՁՆԱԿ, հիմնադրամի հետ սերտ համագործակցության առումով՝ կարևորելով վերջիններիս աջակցող դերը դպրոցի զարգացման գործում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
ՏԻՄ-համայնք-դպրոց համագործակցությունն իրականացվում է բավականին արդյունավետ	Դպրոցի և շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցության սահմանափակությունը խաթարվում է հաստատության նպատակային գործունեությունը
Առկա է սերտ համագործակցություն Կրթության կառավարման մարմնի և շահառու կազմակերպությունների հետ	Համայնքի հետ կապն առավել խորացման ու սերտացման կարիք ունի

[8] «Հանրակրթության մասին ՀՀ օրենք» հոդված 32:

[9] «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենք, հոդված 41:

Դպրոցը մշտապես ընդառաջ է գնում և բաց է համագործակցությունների, նոր ու արդիական ծրագրերի ու նախաձեռնությունների մասնակցելու տեսանկյունից	Դպրոցը կարիք ունի շահառու կազմակերպությունների իր համագործակցության շրջանակն ընդլայնելու
Կրթության կառավարման մարմնի և շահառու կազմակերպությունների հետ համագործակցությունը արձանագրված փորձ է, ուղեցույց և լավագույն գործունեության հնարավորություն կրթադաստիարակչական աշխատանքները և քաղաքականությունը բարելավելու ուղղություններով	Կրթության կառավարման մարմնի հետ համագործակցության և վերջինիս կողմից հնարավոր աջակցության տեսանկյունից նոր մեխանիզմների ներդրման ու բարելավումների կարիք է նկատվում

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում Հոգաբարձուների խորհրդի ձևավորման անհրաժեշտությունը

Այսօր կարևոր և դրական լծակ է հոգաբարձուների խորհուրդը: Դպրոցի մի շարք խնդիրների և կազմակերպչական հարցերի լուծման նպատակով , զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար մեծ դեր ունի հոգաբարձուների խորհուրդի ձևավորումը: Անհրաժեշտ է ձևավորել դպրոցի հոգաբարձուների խորհուրդ, խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների: Անհրաժեշտ է նրանց ներգրավել մի շարք ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը: Հոգաբարձուների խորհրդի նպատակը պետք է լինի օժանդակ միջոցներով ներդրումներ և նվիրատվություններ ներգրավել անհատներից, դպրոցի շրջանավարտներից և կամավոր ֆինանսավորողներից:

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում Շրջանավարտների խորհրդի ձևավորման անհրաժեշտությունը

«Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում Շրջանավարտների խորհրդի ձևավորման հիմնական նպատակը շրջանավարտների համայնքի ու դպրոցի հետ շարունակական կապի պահպանմանը նպաստելն է և նրանց ներուժի դրսևորման ու զարգացման համար պարարտ հող ստեղծելը: Շրջանավարտներից շատերն այսօր էլ դպրոցի կողքին են, հնարավորինս աջակցում են դպրոցի զարգացմանը, սակայն միասնական խորհրդի ստեղծումն առավել կհամակարգի վերջինիս ներուժը՝ ուղղելով այն դպրոցի զարգացմանն ու բարգավաճմանը: Կարծում ենք, որ այս խորհրդի ստեղծումը նունպես դպրոցի համար օրակարգային ու կարևոր հիմնահարց է, ուստի սույն զարգացման ծրագրում նշված հիմնախնդիրն ունի կարևոր ու առանցքային նշանակություն:

1.4Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

Ներկայիս դպրոցը կարիք ունի նորարար, կարողունակ ու նախաձեռնող մանկավարժական աշխատողների: Սա, թերևս, հրամայական է, և պետությունն իր բոլոր լծակներն ու միջոցները ներ է դնում՝ մանկավարժների մասնագիտական ու մեթոդական որակները բարելավելուն: Առանց նորագույն տեխնոլոգիաներին, ուսուցման ժամանակակից մեթոդներին տիրապետելու, ուսուցիչը չի կարող ապահովել կրթության բարձր որակ, խթանել սովորողների առաջադիմությունը, ուստի մեր դպրոցը նույնպես գիտակցում է մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարձրացման անհրաժեշտությունը: Այս համատեքստում կարևոր ենք համարում մանկավարժների ինքնակրթությունը, փորձի փոխանակումը, կամավոր և պարտադիր ատեստավորումների մասնակցությունը, ինչը ներկայիս կրթական համակարգում հաջողություններ ունենալու առաջնային նախապայմանն է: Մենք կարևորում ենք մարդկային ռեսուրսը, ընդառաջ ենք գնում հետաքրքիր ու ժամանակակից նախաձեռնություններով հանդես եկող մանկավարժների աջակցմանը, ովքեր իրենց գաղափարներով կարող են նպաստել դպրոցում ուսումնական գործընթացի որակական ու քանակական ցուցանիշների բարելավմանը: Նկատենք, որ դպրոցում

բոլոր ուսուցիչները նախապես պլանավորում են օրվա դասը, կիրառում ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ, կարևորում մոտիվացված և առաջադիմող սովորողներ ունենալու հարցում իրենց անմիջական ներդրումը, այդուհանդերձ ակնհայտ է, որ կան դժվարություններ, որոնց լուծման համար պետք է ներդնել առավելագույն ջանքերն ու ռեսուրսները:

	Անուն, ազգանուն	Կրթություն	Մասնագիտություն	Դասավանդվող առարկա
1	Բաբայան Գոհար	Բարձրագույն	ՀՊՄՀ, Հայոց լեզու և գրակ.	Տնօրենի ժ/պ
2	Հովհաննիսյան Արա	Բարձրագույն	ԵՊՃՇԻ, Շինարար Ճարտ.	Տ.Տեղակալ ՈՒԱ
3	Մաթևոսյան Մելիք	Բարձրագույն	ԵՊԳԻ, Մեխանիկ ինժիներ	ՆԶՊ
4	Առաքելյան Ռուզաննա	Բարձրագույն	Հյս. Համալսարան, Հոգե բան	Հոգեբան
5	Խաչատրյան Աշոտ	Բարձրագույն	ՀՊՄՀ, Ինֆորամիկա	ԴԱԿ, Տեխնոլոգիա
6	Պապլոյան Գյուլնազ	Բարձրագույն	ԻՄԻ, Տարրական կրթ.,	Մանկ. օգն.
7	Հայրապետյան Քնարիկ	Բարձրագույն	ԵՊՄՀ, Տարրական կրթ.,	Մանկ. օգն., երգ
8	Սմբատյան Անի	Բարձրագույն	ՀՊՄՀ, Ինֆորմ., Տնտես.	Ուսուցիչ, ինֆորմ.
9	Գրիգորյան Սյուզաննա	Բարձրագույն	Եր. ՄԽԱՀ, Բանասեր	Ուսուցիչ, հ.լ. և գրակ.
10	Աբրահամյան Նունե	Բարձրագույն	ՀՊՄՀ, Ռ.լեզու	Ուսուցիչ, ռ.լեզու
11	Խաչատրյան Լիանա	Բարձրագույն	Հյս. Համալս., Անգլերեն	Ուսուցիչ, անգլերեն
12	Բաբաջանյան Թեհմինե	Բարձրագույն	Հյս. Համալս., Անգլերեն	Ուսուցիչ, անգլերեն
13	Մեղրակյան Հրանդուխտ	Բարձրագույն	ԵՊՄՀ, Մաթեմ.	Ուսուցիչ, մաթեմ.
14	Հովհաննիսյան Մարինե	Բարձրագույն	ԵՊՄՀ, պատմ. Իրավագ.	Ուսուցիչ, պատմ., հասարակ.
15	Հարությունյան Հայկուշ	Բարձրագույն	Գորիսի Պ.Մ.Ի., ֆիզիկա	Ուսուցիչ, ֆիզիկա
16	Մարկոսյան Մարիամ	Բարձրագույն	ՀՊՄՀ, ֆիզիկա	Ուսուցիչ, բնագիտ.
17	Մարկոսյան Մարինե	Բարձրագույն	ՀՊՄՀ, քիմիա	Ուսուցիչ, քիմիա
18	Խուդոյան Արման	Բարձրագույն	ՀՖԿՍՊԻ, ֆիզ.դաս.և սպ.	Ուսուցիչ, ֆիզկուլտ.
19	Հարությունյան Նազիկ	Միջին մասնագիտական	Գորիսի ՊՄՈՒ, դասվար	Ուսուցիչ, դասվար
20	Հարությունյան Աղավնի	Բարձրագույն	ԵՊԳԻ, տնտես	Ուսուցիչ, դասվար
21	Եղոյան Գայանե	Բարձրագույն	ՀՊՄՀ, դասվար	Ուսուցիչ, դասվար
22	Պետրոսյան Մերի	Բարձրագույն	ՀՊՄՀ, Հ.լ. և գր	Ուսուցիչ, մայր., հ.լ.

				և գր.
23	Մարգարյան Բաբիկ	Բարձրագույն	Եր. Պ.Մ.Ի.,Ֆիզիկ, տեխ.	Ուսուցիչ, շախմատ
24	Հովակիմյան Շուշանիկ	Բարձրագույն	ԵՊՄՀ, իրավագետ	Ուսուցիչ, ՀԵՊ, պատմ., հաս.
25	Թափուր			
26	Թափուր			
27	Մարտիրոսյան Նորայր	Բարձրագույն	ՀՊՄՀ, աշխարհ.	Ուսուցիչ, աշխարհ.
28	Մաթևոսյան Տաթևիկ	Բարձրագույն	ՀՊՄՀ, ինֆորմատիկա	Ուսուցիչ,Ազգ. երգ, պար
29	Բաբլանյան Աննա	Բարձրագույն	Հյս.Համալ., տարր. կրթ.	Ուսուցիչ, դասվար
30	Աբրահամյան Մարիամ	Բարձրագույն	ԵՊՀ, մաթեմ.	Ուսուցիչ, մաթեմ.

«Շատինի մինչակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 16 ուսուցիչներ մասնակցել են 2022-2023 ուսումնական տարվա պարտադիր վերապատրաստումներին, իսկ ՀՊՉ-ի վերաբերյալ իրականացվող վերապատրաստումներին մասնակցել են հաստատության բոլոր ուսուցիչները: Կամավոր ատեստավորմանը մասնակցել և դրական շեմը հաղթահարել է 1 ուսուցիչ:

Պարտադիր ատեստացիայի վերապատրաստվածների ցուցակ

N		Անուն , Ազգանուն
1	2020-2021	Սյուզի Գրիգորյան
2		Նորայր Մարտիրոսյան
3		Անի Սմբատյան
4	2021-2022	Գայանե Եղոյան
5		Մարինե Հովհաննիսյան
6	2022-2023	Մերի Պետրոսյան
7		Նունե Աբրահամյան
8		Լիանա Խաչատրյան
9		Թեհմինե Բաբաջանյան
10		Հրանդուխտ Սեդրակյան
11		Մարինե Հովհաննիսյան
12		Մարինե Մարկոսյան
13		Մարիամ Մարկոսյան
14		Աղավնի Հարությունյան
15		Աննա Բաբլանյան
16		Բաբիկ Մարգարյան
17		Վինետա Բաբաջանյան
18		Ռուզաննա Առաքելյան



Դասալսումներ/2022-2023 ուստարի/

Արձանագրված տնօրենի կողմից	120
Արձանագրված տնօրենի՝ ուսումնական գծող տեղակալի կողմից	120
Արձանագրված առարկայական մեթոդմիավորման ղեկավարների կողմից	60
Արձանագրված դասղեկների կողմից	150
Փոխադարձ դասալսումներ	50

Համագործակցությունը դպրոցի և ծնողների միջև

Համադպրոցական ծնողական ժողովներ	2

Դասարանական ծնողական ժողովներ	30

2023-2024 ուստարվա ընթացքում դպրոցում գործող խմբակներ՝

- «Սովորում ենք ընթերցելով»
- «Եկեք խոսենք անգլերեն»
- «Խոսքի զարգացում»
- «Մեդիագրագիտություն»

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Մանկավարժական համակազմը հիմնականում ունի ակադեմիական կարողություններ համապատասխան փորձ առարկայական ոլորտներում, ինչը հնարավորություն է տալիս կազմակերպել արդյունավետ ուսումնադաստիարակչական գործընթաց և ուղղորդել սովորողներին	Որոշ ուսուցիչներ բախվում են սովորողների անհատական ուսուցման կարիքները արդյունավետորեն բավարարելու դժվարությունների հետ, ինչը հանգեցնում է ակադեմիական առաջադիմության և ներգրավվածության անկման
Ուսուցիչները իրականացնում են դասերի պլանավորում, ուսուցում, դասարանի կառավարում և ուսումնառության գնահատում	Առկա են ուսուցիչներ, ովքեր դժվարությամբ են ընդառաջ գնում կրթական նորարարություններին
Ուսուցիչները հաճախակի անցկացվում են ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներով դասեր, նախագծային աշխատանքներ, կիրառվում է պրոբլեմային և շերտավորված ուսուցում, գնահատման այլընտրանքային ձևեր	Դպրոցում տեխնոլոգիաների կիրառմամբ դասերը քանակապես և որակապես ունեն բարելավման կարիք
Հնարավորության դեպքում՝ անց են կացվում ՏՀՏ-ների կիրառմամբ դասեր	Որոշ ուսուցիչների ոչ միշտ է հաջողվում ապահովել լիարժեք մասնակցային ուսումնական միջավայր

Ուսուցիչները ՏՄԱԿ-ի գործընկերների հետ աջակցում են ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթության իրացմանը	Մի շարք ուսուցիչներ դժվարություններ են ունենում կարողունակությունների ձևավորման դասատիպերի պլանավորման և անցկացման հարցում
Ուսուցիչները մշտապես կիրառում են անհատակողմնորոշիչ մանկավարժական մեթոդներ՝ սովորողների հնարավոր կարիքները բացահայտելու համար	Մի շարք ուսուցիչներ դժվարություններ են ունենում գնահատման ժամանակակից ձևերի և գործիքների կիրառման հարցում
Ուսուցիչները մասնակցում են պարտադիր վերապատրաստումներին, անդամակցում են առցանց մանկավարժական ֆորումներին ու խմբերին՝ հանդես գալով նախաձեռնություններով, գործընկերների հետ կիսվում են հեղինակային ուսումնական նյութերով	Կամավոր ատեստավորման մասնակցելիության ցուցանիշը բավականին ցածր է

1.5Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների եվ նորորարությունների ներկայացումը

Արդի կրթական բարեփոխումները միտված են կրթական ժամանակակից միտումներին համապատասխան կրթական համակարգ ունենալուն: Ակնհայտ է, որ այս համատեքստում մեծ տեղ է դրվում ՏՀՏ տեխնոլոգիաներին և ուսուցման սովորողակենտրոն ու մասնակցային մեթոդներին: Պետք է նկատել, որ դպրոցն ունի լրջագույն խնդիրներ ՏՀՏ-ների կիրառման տեսանկյունից՝ պայմանավորված համակարգչային կաբինետի և տեխնիկական միջոցների անմխիթար վիճակով: Տեխնոլոգիական միջոցներով դասերը, սակայն, մեծ պահանջարկ ունեն սովորողների շրջանում, դրանք բարձրացնում են վերջիններիս հետաքրքրությունը դասապրոցեսի նկատմամբ, դասերը դարձնում առավել զննական ու պատկերավոր, խթանում են սովորողների տեխնոլոգիական և մեդիա կարողունակության զարգացմանը: Անհնարինը հնարավոր դարձնելով՝ մեր նորարար ուսուցիչներն ամեն կեր փորձում են հաղթահարել հնարավոր խոչընդոտները և տեխնոլոգիաները հասանելի դարձել

սովորողներին: Սակայն պետք է փաստել, որ, իրապես, ռեսուրսները չեն բավարարում, և երբեմն ուսուցիչը կանգնում է փակուղու առաջ:

Հատկապես բնագիտական առարկաների պարագայում տեխնոլոգիաները լուծում են նաև մեկ այլ կարևոր խնդիր՝ պայմանավորված լաբարատորիայում ուսումնանյութական բազայի սակավությամբ: Գիտափորձերը, լաբորատոր ու գործնական աշխատանքները ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն առարկաների պարագայում անց են կացվում առցանց հարթակների օգնությամբ: Մասնավորապես՝ կիրառվում են հետևյալ գործիքները՝Quizizz, Kahoot, Socrative, Google forms, որոնք համաժամանկյա առցանց եղանակով գիտելիքների ստուգման գործիքներ են: Շատ դեպքերում դասին կիրառվում են նաև սվորողների հեռախոսները: Նյութի մատուցումը ՏՀՏ տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ, մատչելի և գրավիչ է դարձնում այն, իսկ սովորողին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում լրացուցիչ հնարավորություն է՝ սովորողների ուսուցման որակը բարելավելու համար:

ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսում՝

- ուժեղացնում է աշակերտների մոտիվացիան,
- հնարավորություն է տալիս օգտագործել թարմ ինֆորմացիա,
- իրականացնել երկխոսություն ինֆորմացիայի աղբյուրի հետ,
- խնայել ժամանակը,
- ուսուցչին տալիս է տեխնոլոգիական մեծ պահուստ:

Մեծ կարևորություն ունի նաև դասի արդյունավետ պլանավորումը: Այս պարագայում արդյունավետությունը չափվում է նաև դասին կիրառվող մեթոդներով: Արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև: Ահա այդ է պատճառը, որ հանրակրթական դպրոցում ուսուցումը և ուսումնառությունը ևս հիմնավոր փոփոխության կարիք ունեն: Ուսումնառության շեշտադրումը պետք է լինեն որոշակի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև սովորողի վերաբերմունքի, արժեքային համակարգի

ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը: Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Հենց այս նպատակի անցնցում իրականացմամբ են պայմանավորվում մեթոդների, միջոցների ու գնահատման եղանակների արդյունավետ ընտրությունը: Հենց այստեղ է, որ արդիական ու պահանջված են ժամանակակից ուսուցման մեթոդներն ու եղանակները, ՏՀՏ գործիքների ներդրմամբ իրականացված դասերը, ոչ ստանդարտ դասերը, նախագծային ու հետազոտական աշխատանքները, որոնք հնարավորություն են տալիս ուսուցչին դուրս գալ ուսուցման ավանդական մոտեցումներից՝ կիրառելով ժամանակակից ու աշակերտակենտրոն մոտեցումներ: Աշակերտակենտրոն ուսուցման, ուսուցչի և աշակերտի արդյունավետ փոխգործակցության, եկուստեք ցուցաբերած սոցիալական ակտիվության արդյունքում հնարավոր է հասնել նոր կարողությունների ու հմտությունների ամրակայմանը, որոնք սովորողը ձեռք է բերում ուսումնառության ընթացքում: Ուսումնառության գործընթացում սովորողի և ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք: Մանկավարժական այս մոտեցումը, կարծում ենք, ժամանակի ընթացքում հնարավորություն կտա լուծել մեր առջև դրած խնդիրը, այն է՝ սովորողի մոտ զարգացնել ինքնուրույն ու նախաձեռնողականություն, սեր ու հետաքրքրություն ուսուցման նկատմամբ:

Վերը բերվածով պայմանավորված՝ դպրոցը մեծ տեղ է տալիս ուսուցման համագործակցային, ակտիվ, ինտերակտիվ, պրոբլեմային, շերտավոր ուսուցման մեթոդներին, կարևորում է նախագծային, հոետազոտական աշխատանքների միջոցով սովորողների ինքնուրույնությունը, ստեղծարարությունը, նախաձեռնողականությունը զարգացնելու հրամայականը: Այդուհանդերձ, պարզ է, որ այս ընթացքում առկա են բազմաթիվ դժվարություններ ու բացեր, որոնք հրատապ ու շոշափելի լուծումներ են պահանջում: Նորարարություններին հարմարվելը, դրանք կիրառելը, արդյունավետ վերջնարդյունք ստանալը, կիրառման ընթացքը վերահսկելը, գնահատելն ու հետևություններ կատարելը պահանջում է մանկավարժամեթոդական երկարատև աշխատանք, ուստի այս համատեքստում կարևոր ենք համարում թե' առարկայական մասնախմբերի, թե' ուսումնական գծով տնօրենի տեղակալի պատասխանատու և շարունակական աշխատանքը, թե'

ուսուցիչների՝ նորը սովորելու, վերապատրաստվելու, փոխգործակցելու պատրաստակամությունը: Սա մի մարտահրավեր է, որը պահանջում է միասնական և փոխօգնությամբ իրականացվող աշխատանք, մենք գնում ենք այդ ճանապարհով:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ուսուցիչները մասնակցում են պարտադիր վերապատրաստումներին	Դպրոցն ունի համակարգիչների թարմացման կարիք, ինչը խոչընդոտում է տեխնոլոգիապես հագեցած դասեր վարելուն
Դպրոցում հաճախակի են անցկացվում նորագույն տեխնոլոգիաներով դասեր, նախագծային աշխատանքներ, կիրառվում է պրոբլեմային և շերտավորված ուսուցում	Դպրոցում առկա են պահպանողական հայացքներով մանկավարժական աշխատողներ, ովքեր խուսափում են ուսուցման ժամանակակից մեթոդներից, տեխնոլոգիաների կիրառումից
Մեթոդմիավորման շրջանակներում ուսուցիչները հանդես են գալիս նորագույն մեթոդների կիրառման իրենց փորձի մասին զեկուցումներով	Դպրոցում տեխնոլոգիաների կիրառմամբ դասերը քանակապես և որակապես ունեն բարելավման կարիք
Հնարավորության դեպքում անց են կացվում ՏՀՏ-ների կիրառմամբ դասեր	Որոշ ուսուցիչների ոչ միշտ է հաջողվում ապահովել լիարժեք մասնակցային ուսումնական միջավայր
Ուսուցիչները անց են կացնում ինտեգրված դասեր և նախագծային աշխատանքներ	Մի շարք ուսուցիչներ դժվարություններ են ունենում կարողունակությունների ձևավորման դասատիպերի պլանավորման և անցկացման հարցում
Անց են կացվում հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, միջդպրոցական և ներդպրոցական առարկայական վիկտորինաներ, միջոցառումներ	Մի շարք ուսուցիչներ դժվարություններ են ունենում գնահատման ժամանակակից ձևերի և գործիքների կիրառման հարցում

1.6Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

Հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացն իրականացվում է՝ հիմք ընդունելով հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչները: «Հանրակրթության պետական չափորոշիչը հենվում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը»[10]: Դպրոցում ՀՊՉ-ի պահանջների համապատասխան ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար պատասխանատու են բոլոր մանկավարժական աշխատողները, ուստի և կարևորում ենք, որ վերջիններս հստակ տիրապետեն չափորոշչի պահանջներին, ճիշտ իրականացնեն ուսումնական առարկայի ուսուցման պլանավորումը, դասավանդումն ու գնահատումը: Նոր չափորոշիչը հնարավորություն է ստեղծում գիտելիքահեն կրթությունից անցում կատարելու կարողունակահեն կրթության, ուստի դպրոցում անց են կացվում կարողունակությունների ձևավորմանն ուղղված դաեսեր: Այս համատեքստում դպրոցի գերխնդիրն է ձևավորել այնպիսի սովորողների, ովքեր կկարողանան լիարժեքորեն ընկալել ուսումնական նյութը, դրա վերաբերյալ արտահայտել կարծիք, վերաբերմունք, գտնել ներառարկայական, միջառարկայական կապեր, կիրառել գործնականում: Այս պատասխանատու գործում ուսումնական հաստատությունը պետք է առաջնորդվի չափորոշչահեն կրթություն իրականացնելու սկզբունքով: Մասնավորապես՝

[10] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում»:

1. Ստեղծել ուսումնական այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն սովորողների ուսումնական գործընթաի արդյունավետությանը:
2. Բոլոր բաղադրիչները՝ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և արժեքային համակարգ, պետք է լինեն ուսումնական գործընթացի անբաժան մասը:
3. Անհատական մոտեցման սկբունքի հիման վրա ապահովել սովորողներից յուրաքանչյուրի կրթական պահանջները:
4. Ուսուցման և դաստիարակության գործընթացում հաշվի առնել սովորողի անձնական կենսափորձը, առանձնահատուկ կարիքները, օժտվածությունը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցի ուսումնական պլանը մշակված և գործածության է դրված չափորոշիչների պահանջներին համապատասխան	Դպրոցում ներդրված չէ ուսուցիչներին մասնագիտական շարունակական զարգացման հնարավորություններ՝ նրանց մասնագիտական կարիքի գնահատման միջոցով
Դպրոցում հաճախակի են անցկացվում նորագույն տեխնոլոգիաներով դասեր, նախագծային աշխատանքներ, կիրառվում է պրոբլեմային և շերտավորված ուսուցում	Մանկավարժներն ունեն գնահատման նոր ձևերի և դրանց գործիքների կիրառման դժվարություններ
Ուսուցիչների գերակշռող մասը ծանոթ նոր ՀՊՉ-ին, օրվա դասի պլանավորումն իրականացնում են առարկայական չափորոշիչներում սահմանված նպատակների և վերջնարդյունքների հիման վրա	Մանկավարժների որոշ մասն ունի նախագծային աշխատանքները պլանավորելու և իրականացնելու դժվարություններ
Հնարավորության դեպքում անց են կացվում ՏՀՏ-ների կիրառմամբ դասեր	Ուսուցիչներից ոմանք չեն կիրառում անհատակողմնորոշիչ մանկավարժական գործիքներ
Մեծ ուշադրություն է դարձվում հետադարձ	

կապի ապահովմանը՝ սովորողների համար ապահովելով ինքնանդրադարձի հնարավորություն	
Անցկացվում են կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասեր	



1.7 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծությունը

Յուրաքանչյուր երեխայի ներառական կրթության համար, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ երեխաների համար կրթական որակյալ և արդյունավետ միջավայրի ապահովումը պարտադիր պայման է: ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր սովորողի ուսուցման կազմակերպման ռազմավարության կազմակերպման ելակետային դրույթերից մեկն այն է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից: Դպրոցում սովորում են ԿԱՊԿՈՒ երեխաներ, սակայն շենքային պայմանները ոչ բավարար ձևով են հարմարեցված այդ սովորողների համար, սա լրջագույն մարտահրավեր է, որի առջև կանգնած է դպրոցը և որի կառավարմանն ու լուծմանը մեծ նշանակություն է տրվում սույն զարգացման ծրագրում: Օրախնդիր ենք համարում Կապկու սովորողների իրավունքների, պատվի արժանապատվության պաշտպանությունը, վերջիններիս համար լիարժեք, անվտանգ ու ապահով ներառական ուսումնական միջավայրի ապահովումը, հնարավոր խտրականության և օտարման բացառումը: Հենց այս նապատակով է, որ կարևոր ենք համարում առաջին հերթին դպրոցի ֆիզիկական վիճակի հարմարեցումը վերջիններիս կարիքներին, նաև՝ խորհրդակցական մարմինների հետ իրազեկողական-բացատրական աշխատանի արդյունավետության բարձրացումը, համագործակցային հարաբերությունների խորացումը ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների և ՏՄԱԿ-ի հետ:

Դպրոցը մեծ կարևորություն է տալիս նաև բազմակարծության, մասնակցային միջավայրի անվերապահ ապահովմանը և գնում է այդ միջավայր առավել աներեր դարձնելու գործիքակազմերի մշակման, տեղայնացման ու կիրառման ճանապարհով: Մենք քաջ գիտակցում ենք, որ նման միջավայրի ապահովման համար կարևոր է, որ մեր կողմից պահպանվեն կառավարման՝ ժողովրդավարության սկզբունքներով առաջնորդվող գործողությունները, լսվեն և հաշվի առնվեն բոլոր կարծիքները, մտահոգությունները, բողոքները: Այդ նպատակով պետք է խթանել դպրոցի

կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը. դրա ոչ միայն աջակցողները, այլև մասնակցային կրթության սկզբունքի համաձայն անմիջական մասնակիցը պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ: Դպրոցում բազմակարծիք, ներառական, մասնակցային և արժեքների վրա հիմնված կրթական միջավայրի վերլուծությունը ներառում է բազմազանության, ներառականության, ակտիվ մասնակցության և արժեքների մշակման խթանմանն ուղղված միջոցառումների որակական և քանակական գնահատումը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցում կարևորվում են ազգային և համամարդկային արժեքների սերմանումը, բարեվարքության նորմերի պահպանումը թե՛ հաստատության անձնակազմի, թե՛ սովորողների շրջանում	Որոշ ուսուցիչների մոտ առկա են մեթոդական դժվարություններ ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատելիս
Դպրոցը պաշտոնապես ընդունում է բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը (սովորողներ, ծնողներ, ուսուցիչներ և տեղական համայնք) որոշումների կայացման գործընթացներին՝ պատասխանատվության դպրոցի կառավարմանը և կրթական գործունեությանը՝ խթանելով սեփականության և համատեղ պատասխանատվության զգացումը	Մանկավարժներից ոմանք պասիվ են կարծիք հայտնելու նախաձեռնություններով հանդես գալու հարցում
Դպրոցը կարևորում է բարոյական և էթիկական արժեքների զարգացումը, սոցիալական պատասխանատվությունը՝ սովորողների մեջ սերմանելով ազնվության, կարեկցանքի, հարգանքի ամուր հիմքեր	Մի շարք ուսուցիչների շրջանում նկատելի է անտարբերություն, ինչը խաթարում է բազմակարծության միջավայրի ձևավորմանը
Ուսուցիչները ՏՄԱԿ-ի գործընկերների հետ աջակցում են ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթության իրացմանը	Բարձր դասարանի սովորողների շրջանում ոչ օրինակելի վարքային դրսևորումները բավականի հաճախ են հանդիպում

Դպրոցն ամեն կերպ կանխարգելում է խտրական վերաբերմունքի դրսևորումները ԿԱՊԿ ունեցող սովորողների հանդեպ	
Դպրոցում մեծ նշանակություն է տրվում խոսքի ազատությանը, տարակարծությանը	

1.8 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը

Գաղտնիք չէ, որ մանկավարժական աշխատողների աշխատունկաության ու մոտիվացիայի բարձր մակարդակն առավել հասանելի են դարձնում կրթական բարեփոխումների և դպրոցի զարգացման տեսլականը, ուստի վերջիններիս արժևորումը, խրախուսումը, ինքնակրթության համար նպաստավոր պայմանների ապահովումը պետք է լինի դպրոցի կարևոր առաքելությունը: Մեր համոզմամբ՝ լավ ու զարգացող դպրոց ունենալու կարևոր նախապայմաններից մեկն էլ հենց մանկավարժների խրախուսումն է, նրանց ձեռքբերումներին հավուր պատշաճ արձագանքը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցը պարտադիր կերպով ստեղծարար, նորարար ուսուցիչներին հանձնվում է պատվոգրեր, շնորհակալագրեր	Նորարարների և նախաձեռնող ուսուցիչների թիվը դպրոցում մեծ չէ
Կրթական առցանց հարթակներում որոշ ուսուցիչներ վարում են սեմինարներ, կիսվում մասնագիտական փորձով	Մանկավարժներից ոմանք պասիվ են կարծիք հայտնելու նախաձեռնություններով հանդես գալու հարցում
Հատատության տնօրենը, ուս. գծով տեղակալը ուսուցիչներին պարբերաբար տրամադրում են մասնագիտական խորհրդատվություն, մասնագիտական աճին միտված ուղղորդումներ	Նկատվել են գործընկերների մասնագիտական աշխատանքը պիտակավորելու, բանսարկության մասնավոր դեպքեր

1.9 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շողումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

Ուսումնական հաստատությունն իր ֆինանսական գործունեությունը վարում է բաց և թափանցիկ՝ յուրաքանչյուր ուստարվա ֆինանսական նախահաշիվը հասանելի դարձնելով շահագրգիռ կողմերի և ոլորտի պատասխանատուների համար: Հաստատությանը տրամադրվող ֆինանսական միջոցները ծախսվում են բացառապես հաստատության կարիքների վրա՝ հաշվի առնելով առաջնահերթությունները: Դպրոցում իրականացվող ծախսերի վերլուծությունը ներառում է դրանց արդյունավետության ցուցանիշների գնահատում, պլանավորված բյուջեից շեղումների հայտնաբերում և պլանավորման ցանկացած խնդիրների գնահատում:

Քննարկվել և հավանության է արժանացել
հաստատության խորհրդի կողմից
խորհրդի նախագահ՝

Հաստատում եմ՝
ՀՀ Վայոց Ձորի մարզպետ՝
Ա. Գրիգորյան

« Շատինի դպրոց»-ի 2022- 2023 ուսումնական տարվա

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ

Պաշտոնների անվանումը	հաստիքնե՝ ՐԸ	դրույքաչափը	հավելավճար	ամսական աշխատավարձ	ընդամենը աշխատավարձ	ընդամենը տարեկան աշխատավարձի ֆոնդը
Վարչական միավորներ						
Տնօրեն	195000	1	0	195000	195000	2340000
Փոխտնօրեն	170000	1	0	170000	170000	2040000
ԸՆԴԱՄԵՆԸ						**4380000**
Մանկավարժական հաստիքներ						
Շինարար, ՔՊ	115060	1	47812	169072	169072	2028864
Ուսուցչի օգնական	93750	1,5	0	140625	140625	1687500
Հոգեբան	110770	1	0	110770	110770	1329240
ԴԱԿ	111870	1	9500	121370	121370	1456440
ԸՆԴԱՄԵՆԸ						**6502044**
Ուսումնաօժանդակ անձնակազմ						
Գլխավոր հաշվապահ	176000	1	0	176000	176000	2112000
Համակարգչային օպերատոր	104000	1	0	104000	104000	1248000
Գրադարանավար	104000	0,7	0	72800	72800	873600
Լաբորանտ	104000	1	0	104000	104000	1248000
Դռնապահ	95625	1	0	95625	95625	1147500
Հավաքարար	95625	3	0	286875	286875	3442500
Պահակ	104000	2	0	208000	208000	2496000
Պահակ	95625	1	0	95625	95625	1147500
բանվոր՝ սեզոնային աշխատող	104000	1	0	34670	34670	138680
ԸՆԴԱՄԵՆԸ						**13853780**
ԸՆԴԱՄԵՆԸ						**24735824**

Դպրոցի տնօրեն՝

Հավելված N 1
ՁԵՎ N 1
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարի
<<04>> 02 2012թ. N104 -Ն հրամանի

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՈՎ

01. 01. 2023թ. -- 31. 12 . 2023թ. ժամանակահատվածի համար

Պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը Վայոց Ձորի մարզպետարան
Համակարգի թույլտվության գծով անփոփ Ղեկավարել՝
Պետական ոչ առևտրային կազմակերպության անվանումը

	Ցուցանիշների անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի հիմնական ծրագրային ցուցանիշները (ասիմպտոտից տարբերվող)			
		I եռամսյակի գրպտված ծրագրային ցուցանիշը	I կիսամյակի գրպտված ծրագրային ցուցանիշը	Իննամսյա գրպտված ծրագրային ցուցանիշը	Տարեկան գրպտված ծրագրային ցուցանիշը
1	Դրամական միջոցների մուտքերի (հաշվետու ժամանակաշրջանի սկզբի) մնացորդը	1830,5	1830,5	1830,5	1830,5
2	ԸՆԴԱՄՈՒՆԸ Գործառնական ելքամուտներ	12155,10	29712,20	46754,7	60345,20
	այդ թվում՝				
2.1	Պետական մասնակցությամբ եկամտաբեր ընկերությունների բյուջեից Հայաստանի Հանրապետության պետական				515,6
2.2	Պետական մասնակցությամբ եկամտաբեր ընկերությունների Այլ աղբյուրներից ստացվող ներդրումներ				1780,5
2.3	Գործունեության ներքին ծախսերի հաշվեկշիռներ	424,7	955,5	1486,3	2055,8
2.4	Գործունեության գծով պետական բյուջեի ծախսերի ֆինանսական աջակցություններ	11730,4	28756,7	45268,4	55993,3
2.5	Հարկերնվազեցումներ				
3	ԸՆԴԱՄՈՒՆԸ Գործառնական ծախսեր	13985,6	31542,7	48585,2	62175,7
3.1	Աշխատանքի վարձատրության եվ դրան հավասարեցված հատկացումներ	12178,8	27445	42783,7	54492,4
3.2	Ապրանքների եվ ծառայությունների գծով բերման հետևանքով հատկացումներ	1776,8	3517,7	5201,5	6972,6
3.3	Գործունեության եվ այլ դրամաշնորհներ				
3.4	Այլ ծախսեր	30,0	130,0	150,0	260,7
3.5	Հարկերնվազ ծախսեր		450,0	450,0	450,0
4	Դրամական միջոցների մուտքերի (հաշվետու ժամանակաշրջանի վերջի) մնացորդը (տող 1 + տող 2-տող 3)	0,0	0,0	0,0	0,0

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցը պլանավորում է բյուջեն՝ հաշվի առնելով՝ անձնակազմի կարիքները, հաստատության ուսումնական պլանը, ռեսուրսները, ենթակառուցվածքների պահպանումը և սովորողների կարիքները	Դպրոցում ներդրված չէ ռեսուրսների արդյունավետության օպտիմալացման համակարգ
Դպրոցի ծախսերը կառավարելի են և հիմնականում հատկացվում են այն ոլորտներին, որոնք մեծ ազդեցություն ունեն սովորողների ուսման և զարգացման վրա	Դպրոցում ներդրված չէ կրթական ծախսերի գնահատման համակարգ
Դպրոցը պարբերաբար հրապարակում է ֆինանսական հաշվետվությունները իր պաշտոնական կայքում	Ֆինանսավորումը կատարվում է հիմնականում պետական բյուջեից, դպրոցը չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն, չունի հավելյան ֆինանսական միջոցների կայուն աղբյուրներ

2. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

2.1 Զարգացման ծրագրի նպատակներն ու ակնկալվող արդյունքները

Այն նպատակը, որի համար անարդար միջոցներ են պահանջվում, արդար նպատակ չէ: **Կարլ Մարքս**

Իրավիճակի վերլուծությունը հնարավորություն է տալիս սահմանել զարգացման ծրագրի նպատակները: Նպատակը որոշակի ժամանակահատվածում իրականացվող գործունեության սպասվող արդյունք է, այն է ինչին ձգտելու ենք հասնել: Նպատակը պետք է լինի կոնկրետ և չափելի: Չնայած հիմնականում նպատակը ձևակերպվում է որակական առումով, սակայն վերջնական արդյունքները պետք է արտահայտված լինեն քանակական տվյալներով: Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է առաջիկա հինգ տարում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի, գիտելիքի վարկանիշի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև ծառացած հիմնախնդիրների աստիճանական լուծմանը, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն, կրթօջախի առաջընթացին՝ առաջնորդվելով հանրակրթության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի, ՀՀ կառավարության որոշումների պահանջներով: Ծրագրի ռազմավարական գլխավոր ուղղությունը ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես գործուն և ստեղծագործ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը միտված կրթության համակարգի առաջանցիկ զարգացումն է՝ որպես պետականության ամրապնդման և հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացի գործոն:

Զարգացման ծրագրի նպատակները՝

- Փորձառու մասնագետներ ,նորարար և ստեղծագործ ուսուցիչներ:
- Դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի փաթեթի ստեղծում:
- Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում:
- Դպրոցի կաբինետների, լաբորատորիաների կահավորում:
- Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում:
- Կրթության որակի ներքին գնահատման համակարգի կատարելագործում:
- Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում:
- Սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրում:
- Սովորողների հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդում,ազգային և համամարդկային արժեքների պահպանում և զարգացում:
- Սովորողների մասնագիտական կողմնորոշման և հետագա կրթության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորում:
- Աշակերտական ինքնակառավարման մարմնինների գործունեության կատարելագործում:
- Սովորողների առողջության պահպանմանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործում:
- Դպրոց-ծնող-համայնք կապերի ամրապնդում:
- Ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացում:
- ՏՀՏ կիրառումը դասապրոցեսում՝ ուսման որակի բարձրացման նպատակով
- Դպրոցի կառավարման ժողովրդավարացում, դպրոցի զարգացման գործում ծնողների և համայնքի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում:
- Սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի ստեղծում:

- Սովորողների ինտեգրում հասարակական կյանքին, արտադպրոցական աշխատանքներին, ազգային մշակույթին, հայրենասիրական արժեքների ձևավորում, ամրապնդում:
- Ծնողների մասնակցության ապահովում սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին:
- Բուլինգի, բռնության, օտարման, խտրականության կանխարգելում:
- Խորհրդակցական մարմինների արդյունավետ գործունեություն:

Զարգացման ծրագրի ակնկալվող արդյունքները՝

- Կընդլայնվեն աշակերտների՝ որպես անհատների կայացման համար անհրաժեշտ նախադրյալները:
- Կընդլայնվի ծնողական և աշակերտական խորհուրդների դերը և ընդգրկվածությունը դպրոցի ներքին կյանքում:
- Կրթության գաղափարախոսական հենքի ապահովում՝ հենվելով պետության և համամարդկային արժեքների ներդաշնակեցման սկզբունքների վրա:
- Բոլոր սովորողների համար որակյալ կրթության մատչելիության ապահովում
- Սովորողների ստեղծագործական և ստեղծարար մտքի զարգացում՝ կրթության մեթոդների անհատականացման և արդիականացման միջոցով:
- Սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշում:
- Մշակույթը որպես հոգևոր սնունդ ընկալելու ունակություն:
- Քաղաքացիական գիտակցության իրավունքի ըմբռնում:
- Հանրակրթությունը՝ որպես մարդու և քաղաքացու շահերին նպաստող, անհատին ու ժողովրդին ծառայող համակարգի ընկալում:

Սահմանված նպատակներին հասնելու և ակնկալվող արդյունաքները լիարժեք արձանագրելու համար դպրոցի զարգացման ծրագրում ձևակերպվել և սահմանվել են մի շարք խնդիր-ուղղությունները, որոնցից առանցքայինը ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես գործուն և ստեղծագործ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը միտված կրթության համակարգի առաջանցիկ զարգացումն է՝ որպես պետականության ամրապնդման և հասարակության սոցիալ-տնտեսական

առաջընթացի գործոն: Զարգացման ծրագրով սահմանված նպատակների իրագործման և խնդիրների լուծման հիմնական արդյունքը 21-րդ դարի դպրոցի ստեղծումն է, որը կունենա.

- որակյալ կրթություն և հրապուրիչ կրթական միջավայր,
- բարձր որակավորում ունեցող ուսուցչամանկավարժական համակազմ,
- ինքնազարգացմամբ մոտիվացված սովորողներ,
- մրցունակ սերունդ ձևավորելու կարողություններ,
- արդի նյութատեխնիկական բազա, այդ թվում՝ ՏՀՏ,
- առաջադեմ կրթական տեխնոլոգիաներ,
- դպրոցի խնդիրներով մտահոգ խորհրդակցական մարմիններ:

Դպրոցի զարգացման ծրագրով նախանշված են հաստատության ամբողջական նպատակները և խնդիրները, որոնք բխում են դպրոցի, համայնքի կարիքներից և համապատասխանում են առկա հնարավորություններին: Դպրոցի զարգացման ծրագրում՝ ըստ ոլորտների սահմանված նպատակների և խնդիրների, մշակված են համապատասխան գործողությունները, հստակ ներկայացված են պատասխանատուները (կատարողները) և ժամկետները: Հաստատության համակարգված զարգացումը ծրագրի միջոցով ներկայացնելը հիմք է ստեղծում հաստատության գործունեության աշխատանքային տարեկան պլանի մշակման համար, որը տվյալ հաստատության միջնաժամկետ (մեկ ուսումնական տարվա համար կազմված) զարգացման ծրագրային փաստաթուղթն է: Հաստատության գործունեության տարեկան աշխատանքային ծրագրի դրույթները մշակվում են դպրոցի զարգացման ծրագրի հիման վրա: Ընդ որում՝ երկարաժամկետ, սովորաբար 5 տարվա համար մշակված ծրագիրը պարբերաբար տնօրենի կողմից վերանայվում է և համապատասխան փոփոխություններով հանդերձ՝ ներկայացվում կառավարման խորհրդի հավանությանը: Գործողությունները պլանավորելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

- Արդյոք սահմանված գործողությունները նպատակաուղղվա՞ծ են տվյալ խնդրի լուծմանը:

- Արդյոք գործողությունները ձևակերպվա՞ծ են հստակ, չե՞ն պարունակում երկիմաստություն, բոլոր կատարողները դրանք միանշանա՞կ են ընկալում:
- Արդյոք հնարավո՞ր է ճշգրիտ չափել տվյալ գործողության արդյունքը:
- Չե՞ն սահմանված այնպիսի գործողություններ, որոնց արդյունքների հասանելիությունը իրատեսական չէ:
- Արդյոք բոլոր գործողությունների ամբողջությունը ապահովու՞մ է տվյալ խնդրի լուծումը:

ԴԶԾ-ի իրականացման փուլում սահմանված նպատակների և խնդիրների հստակեցման և ճշգրտման արդյունքում գործողությունները կարող են վերանայվել՝ պայմանավորված դպրոցի տարեկան աշխատանքային պլանում ԴԶԾ-ից բխող նպատակների և դրանց խնդիրների ժամանակային փոփոխություններով և արտաքին ու ներքին գործոնների ազդեցություններով:

Զարգացման ծրագրի արդյունավետ իրականացման համար այն պարունակում է նաև տեղեկատվություն ծրագրի կատարման պատասխանատուների վերաբերյալ: Ընդ որում՝ ծրագրի մշակումից հետո այդ տեսանկյունից անհրաժեշտ է այն պարբերաբար վերանայել՝ հաշվի առնելով հաստատության գործունեության մեջ կատարվող ընթացիկ փոփոխությունները, ինչպես նաև հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող բարեփոխումները. դրանց հետևանքով կարող են փոխվել նաև պատասխանատուները: Յուրաքանչյուր գործողություն իրականացնելու համար ԴԶԾ-ում առանձնացվում են պատասխանատուներ (կատարողներ): Պետք է հաշվի առնել, որ գործողությունն իրականացնող պատասխանատուն և կատարողներն ունենան թիմային աշխատանք կատարելու փորձ և հմտություններ, հակառակ դեպքում՝ կմեծանա տվյալ գործողությունից ակնկալվող արդյունքների ռիսկայնությունը: Անհրաժեշտ է նաև պլանավորել պարբերական հաշվետվությունների ձևաչափ (մեխանիզմ): Դպրոցի զարգացման ծրագրի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է բոլոր պատասխանատուների փոխհամագործակցված և փոխներգործուն աշխատանքը: Դրա պլանավորման և իրականացման պատասխանատուն առաջին հերթին հաստատության տնօրենն է: Ցանկալի արդյունքների հնարավոր է հասնել

բացառապես հաստատության բոլոր աշխատակիցների՝ ուսումնական և դաստիարակչական ոլորտների ղեկավարների, առանձին ստորաբաժանումների պատասխանատուների, ուսուցիչների, մանկավարժական աշխատողների, ինչպես նաև՝ ուսումնաօժանդակ (վարչատնտեսական) մասի աշխատողների համընդհանուր աշխատանքի շնորհիվ:

2.2 Ուսհաստատության շենքային պայմանները, նյութատեխնիկական բազա

ԽՆԴԻՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ	ԺԱՄԿԵՏ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
Բարեկարգ, վերանորոգված, մաքուր, սանիտարահիգենիկ պայմաններին համապատասխան, դպրոց	Վերանորոգել դպրոցի շենքը, բարեկարգել բակը	Պետական ֆինանսավորում Դպրոցի խնայողություններ Դրամաշնորհներ Բարերարներ	2024-2028թթ. Տնօրեն Տնտեսվար Մանկ. համակազմ
Անվտանգ ուսումնական միջավայր, հարմարավետ ուսումնական միջավայր ԿԱՊԿՈՒ սովորողների համար	Կառուցել թեքահարթակներ, հատուկ կահավորված դասասենյակ ԿԱՊԿ սովորողների համար, հետևել անվտանգության վահանակին, մշտապես թարմացնել հրդեհաշիջման սարքը	Համագործակցություն ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի հետ Պետական ֆինանսավորում Դպրոցի խնայողություններ Դրամաշնորհներ Բարերարներ	2024-2025 ուստարի Տնօրեն Տնտեսվար Մանկ. Համակազմ ՏՄԱԿ
Վերանորոգված ճաշարան, համակարգչային սենյակ, ԿԱՊԿ սովորողների սենյակ, սանհանգույց	Ձեռք բերել ճաշարանի համար տեխնիկա, գույք, պարագաներ, տարբեր ուսումնական առարկաների դասավանդման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա	Համագործակցություն ՏՄԱԿ- հետ Պետական ֆինանսավորում Դպրոցի խնայողություններ, Դրամաշնորհներ Բարերարներ	2024-2028թթ. Տնօրեն Մանկ. համակազմ

Բարեկարգ, պարսպապատ բակ, որակյալ ջեռուցման համակարգ	Մշտապես խնամել բակը, պարսպապատել	Պետական ֆինանսավորում Դպրոցի խնայողություններ, Դրամաշնորհներ Բարերարներ	2025-2026 ուստարի Տնօրեն Տնտեսվար Մանկ. համակազմ
Կահավորված և նյութատեխնիկական պարագաներով հագեցած դասասենյակներ	Ձեռք բերել դասասենյակների համար անհրաժեշտ գույք, նյութատեխնիկական բազա	Պետական ֆինանսավորում Դպրոցի խնայողություններ Համայնքի միջոցներ	2024-2028թթ. Տնօրեն Մանկ. համակազմ
Կահավորված և սարքավորումներով հագեցած լաբորատորիա	Ձեռք բերել բնագիտական հարուստ նյութատեխնիկական բազա/ լաբորատոր սարքեր, նյութեր, քարտեզներ, ճանաչողական պաստառներ/	Պետական ֆինանսավորում Դպրոցի խնայողություններ, Դրամաշնորհներ Բարերարներ Շրջանավարտների խորհուրդ	2024-2025 ուստարի Տնօրեն Մանկ. Համակազմ
ՏՀՏ-ների ներուժի առավելագույն օգտագործում	Ձեռք բերել համակարգիչներ, օժանդակ սարքեր, էլ գրատախտակներ	Պետական ֆինանսավորում Դպրոցի խնայողություններ, Դրամաշնորհներ Բարերարներ Շրջանավարտների խորհուրդ	2024-2028թթ. Տնօրեն Մանկ. Համակազմ ՏՄԱԿ

2.3Մանկավարժների մասնագիտական որակավորման բարձրացման միջոցառումներ

ԽՆԴԻՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ	ԺԱՄԿԵՏ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
Մանկավարժական համակազմի մասնագիտական և մեթոդական ներուժի կատարելագործում	Խթանել ուսուցիչների ներգրավումը մասնագիտական և մեթոդական զարգացմանը նպաստող վերապատրաստումներին	Դասալսումներ, սեմինարներ, փորձի փոխանակում, մասնագիտական զեկույցներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. համակազմ
Մոտիվացված, ոգևորված, նորարար ուսուցիչներ	Շահագրգռել ուսուցիչներին՝ նախագծելու և իրականացնելու	Դասալսումներ, սեմինարներ, փորձի փոխանակում, մասնագիտական	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով

	հետազոտական և նախագծային աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:	զեկույցներ, ուսուցչական առցանց հարթակներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. համակազմ
Մեթոդական միավորումների դերի բարձրացում, ուսուցիչների փոխգործակցությա ն խրախուսում	Ձևավորել անհրաժեշտ միջավայր՝ մանկավարժական փոխգործակցության և առաջավոր փորձի փոխանակման համար:	Դասալսումներ, սեմինարներ, փորձի փոխանակում, մասնագիտական զեկույցներ, ուսուցչական առցանց հարթակներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. համակազմ
Մանկավարժական աշխատողների շրջանում իրավագիտակցությ ան և պատասխանատվո ության խթանում, ներքին կարգապահական կանոնների պահպանմանն ուղղված քայլերի իրականացում	Թեմատիկ սեմինարներ, իրազեկող թռուցիկներ, հոլովակներ:	Դասալսումներ, սեմինարներ, փորձի փոխանակում, մասնագիտական զեկույցներ, ուսուցչական առցանց հարթակներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. համակազմ
Բազմակարծությա ն, նորարարության, նախաձեռնողական ության խթանում ուսուցիչների շրջանում	Քննարկումներ, հանդիպումներ, նորարարական ծրագրեր:	Պատվոգրեր, Շնորհակալագրեր Դպրոցի միջոցներով	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. համակազմ
ՀՊՉ-ներին վերաբերող սեմինարներ, քննարկումներ, օրինակելի փորձի փոխանակում	Մանկավարժական աշխատողների շրջանում փորձի փոխանակման խթանում մի շարք գործիքների օգնությամբ՝ ինքնագնահատում, փոխադարձ գնահատում,	Դասալսումներ, սեմինարներ, փորձի փոխանակում, մասնագիտական զեկույցներ, ուսուցչական առցանց հարթակներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. համակազմ

	ինքնանդրադարձ		
Առաջնորդվել կրթական ոլորտի բարեփոխումներով	Դասավանդման որակը բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ, դասախոսություններ, հանդիպումներ, կոնֆերանսներ, ուսուցողական և բաց դասեր, կատարել դասալսումներ, մեծ ուշադրություն դարձնել դասավանդողների գնահատելու ընթացակարգերի կիրառմանը:	Մեթոդական զեկուցումներ, ճանաչողական հոլովակներ, քննարկումներ	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. համակազմ

2.4 Կրթության որակի բարձրացման միջոցառումներ

ԽՆԴԻՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ	ԺԱՄԿԵՏ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
Սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, ինքնազարգացմա, կարողունակությունների և հմտությունների կատարելագործում	Անցկացնել արդյունավետ ուսուցման տեխնոլոգիաների, ակտիվ ուսուցման մեթոդական հնարների, ուսումնատեխնիկական անհրաժեշտ պարագաների, ուսուցման արդի և փոխներգործուն միջոցների կիրառմամբ դասեր	Դինամիկ դասեր ՏՀՏ տեխնոլոգիաներ, Զննական պարագաներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. համակազմ
Մոտիվածված, ոգևորված, նորարար սովորողներ	Բարձրացնել սովորողների ակտիվությունը դասին՝ անցկացնելով	Դինամիկ դասեր ՏՀՏ տեխնոլոգիաներ, Զննական պարագաներ, Սովորողների խրախուսման գործիքներ:	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ

	կարողունակություն ների ձևավորմանն ուղղված դասեր	Ֆինանսական միջոցներ չի պահանջում	Մ/մ նախագահ Մանկ. համակազմ
Սովորողների՝ տեղ եկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացում	Անցկացնել ՏՀՏ դասեր, ձևավորել էլեկտրոնային գրադարանային հարթակ, դասարանային և դպրոցական կայք էջեր	Դինամիկ դասեր ՏՀՏ տեխնոլոգիաներ, Զննական պարագաներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. համակազմ
Կարևորել սովորողների մասնակցային դերը դպրոցում	Պլանավորել և շարունակաբար անցկացնել թեմատիկ ուսումնական մրցույթներ, առարկայական շաբաթներ, բաց դասեր, գործնական աշխատանքներ:	Դինամիկ դասեր ՏՀՏ տեխնոլոգիաներ, Զննական պարագաներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. համակազմ
Կազմակերպել արտադասարանայ ին և երկարօրյա ուսուցում	Ընդլայնել կազմակերպվող լրացուցիչ կրթական ծառայությունները, ներառել գեղագիտության և սպորտի ոլորտները:	Խմբակներ Էքսկուրսիաներ Ճանաչողական այցեր	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Դասղեկներ Աշ. խորհուրդ
Բարձրացնել Աշակերտական խորհրդի դերը դպրոցում	Ինքնավարության օրերի անցկացում, սովորողներին տարատեսակ ծրագրերի մեջ ներառում՝ «Իմ կյանքը համայքում». «Ես մեդիագրագետ եմ», « Իմ համայնքը», «Սպորտը և ես» և այլն	Նախագծերի, ծրագրերի, փառատոների, վիկտորինաների անցկացում: Դպրոցի միջոցներով	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. Համակազմ Աշ. խորհուրդ

2.5 Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացման միջոցառումներ

ԽՆԴԻՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ	ԺԱՄԿԵՏ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
Կառավարման խորհրդի դերի և մասնակցության արժևորում	Հաստատության ընդհանուր և ուսումնադաստիարակչական գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողության իրականացում	Հանդիպումների համար անհրաժեշտ միջոցներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Կառավարման խորհուրդ
Կառավարման խորհրդի դերի և մասնակցության արժևորում	Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողություն, անհրաժեշտ հաշվետվությունների քննարկում և վերլուծություն, ներքին և արտաքին գնահատման արդյունքների վերլուծություն,	Հանդիպումների համար անհրաժեշտ միջոցներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Կառավարման խորհուրդ
Ծնողական խորհրդի դերի և մասնակցության արժևորում	Ուսումնադաստիարակչական աշխատանքներում ծնողական խորհրդի մասնակցության դերի բարձրացում, ծնողական խորհրդի և խորհրդակցական մյուս մարմինների միջև փոխգործակցության մեխանիզմների կիրառմամբ առկա կապերի ամրապնդում	Հանդիպումներ, քննարկումներ, ծնողական ժողովներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մանկ. համակազմ Ծնողական խորհուրդ
Ծնողական խորհրդի դերի և մասնակցության արժևորում	Ուսումնադաստիարակչական գործընթացներում միասնական պահանջների ձևավորում, արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ծնողական խորհրդի	Հանդիպումներ, քննարկումներ, ծնողական ժողովներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Տնօրենի՝ ուս գծով տեղակալ Մանկ. համակազմ Ծնողական խորհուրդ

	մասնակցության խթանում, սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման գործում աջակցության մեխանիզմների մշակում, փոխվստահության և համագործակցության ընդհանուր մթնոլորտի ձևավորում:		
Աշ. խորհրդի դերի և մասնակցության արժևորում	Աշակերտական խորհրդի արդյունավետ գործունեության խթանում, սովորողների ինքնավարության և ինքնակառավարման մեխանիզմների կատարելագործում,	Միջոցառումներ,մրցույթներ, համագործակցություն շահառու կազմակերպությունների հետ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Մանկ. համակազմ Աշակերտական խորհուրդ Շահառու կազմակերպություններ
Աշ. խորհրդի դերի և մասնակցության արժևորում	Սովորողների համար առողջ և բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ամրապնդում, սովորողների առողջության, անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին աշակերտական խորհրդի մասնակցության օժանդակում	Նախագծերի, ծրագրերի, փառատոների, վիկտորինաների անցկացում: Դպրոցի միջոցներով	2024-2028թթ. շարունակաբար Տնօրեն Մանկ. համակազմ Աշակերտական խորհուրդ Շահառու կազմակերպություններ

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



Կրթության ամբողջ նպատակը հայելիները պատուհաններ դարձնելն է: ՍԻԴՆԵՅ Ջ. ՀԱՐԻՍ

3.1 Կրթական կարիքների նկարագրությունը

ՀՀ Վայոց ձորի մարզի «Շատինի միջնակարգ դպրոցը» ՊՈԱԿ-ն իր գործունեությունն իրականացնում է՝ առաջնահերթություն համարելով 21-րդ դարի թվային պահանջներով զինված, ինքնուրույն մտածող, ժամանակին համընթաց քայլող, ստեղծագործող, մարդասեր, կրթված, հայրենասեր անհատների ձևավորումը, որոնք կերտում են ապագայի Հայաստանը՝ ուժեղ, անկախ, մրցունակ և ազգային արժեքների պահպանմամբ: Յուրաքանչյուր կազմակերպության, այդ թվում մեր դպրոցի առաքելությունը կրթական կարիքների անցնցում և արդյունավետ բավարարումն է.

- Ժամանակի պահանջներին համապատասխան սերունդ կրթելն ու դաստիարակելը:
- Ապագայի մարտահրավերներին դիմակայելու և պայքարելու պատրաստ և ունակ մարդու ձևավորումը:
- Ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործական այնպիսի միջավայրի ձևավորումը, որը կապահովի յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական հմտությունների, քննադատական մտածողության, անհատական ունակությունների զարգացումը:
- Ազգային գաղափարախոսության կրող և համաշխարհային մշակութային կյանքին ինտեգրված քաղաքացի դաստիարակելը, ով ունակ կլինի դիմագրավելու ժամանակակից մարտահրավերներին և իր ավանդը ներդնելու հայկական մշակույթի զարգացման և համաշխարհային հարթակներում այն ներկայացնելու գործին:
- Տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների կիրառումը դարձնել ամենօրյա կրթության մաս: Սովորողներին հնարավորություն տալ սեփական

նախաձեռնություններն ու ծրագրերը իրականացնել արդի ժամանակներին համահունչ:

- Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը աջակցելը:
- Յուրաքանչյուր սովորողի համար այնպիսի բարոյահոգեբանական միջավայրի ստեղծումը, որտեղ սովորողը կարող է դրսևորել իր կարողություններն առավելագույն ձևով:
- Մերօրյա մարտահրավերների համատեքստում առանձնակի կարևորել լեզուների ուսուցումը, որոնց տիրապետումը 21-րդ դարի ստեղծագործող անհատի համար առաջին հերթին հաղորդակցման և մասնագիտական զարգացման ապահովման երաշխիք է:
- Կրթական երեք աստիճաններում ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը: Կիրառել կրթության և արվեստի ներգործության ուժը սովորողների առողջական, հոգեբանական խնդիրները հաղթահարելու գործում:
- Կարևորելով յուրաքանչյուր սովորողի անհատական կարողություններն ու ունակությունները՝ ստեղծել միջավայր, որը հաճելի և սիրելի է սովորողի համար:
- Զարգացնել սովորողների իրավագիտակցությունը, ապահովել ինքնակառավարման մարմինների լիակատար և ակտիվ գործունեությունը:
- Սովորողների համար ստեղծագործական կարողությունների զարգացման տարբեր հարթակների ապահովումը դարձնել առաջնահերթություն:
- Կրթության մեջ կարևորել ոչ միայն գիտելիքը, այլև կարողունակությունները:
- Ժողովրդավարական արժեքների խթանումն ու դաստիարակումը համարել առաջնահերթություն:
- Ազգային հենքի վրա տրվող կրթությունն ու դաստիարակությունը դնել հայրենասիրական դաստիարակության հիմքում:

3.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Ներկայումս մեր երկրում մեծ թափով իրականացվում են կրթական բարեփոխումներ, որոնք նպատակաուղղված են հիմնական առկա բոլոր ռեսուրսները՝ տեխնոլոգիական, մեթոդական, մարդկային, համակարգելու և դրանց օգնությամբ առավել լավ դպրոց և որակյալ կրթական համակարգ ունենալուն: Ակնհայտ է, որ վերջին տասնամյակում կրթական բարեփոխումների առանցքում սովորողների՝ իրենց ուսումնառության գործընթացում ունեցած դերի և մասնակցության վերարժեվորումն է, ինքնուրույն, նախաձեռնող, ստեղծարար ու մտածող սերունդ դաստիարակելու տեսլականը, ով կարող է իր հմտություններն ու կարողություններն անխոչընդոտ կիրառել նաև դպրոցից դուրս: Մեր դպրոցը նույնպես ամեն կերպ գնում է այս նպատակներն իրականություն դարձնելու ուղղությամբ՝ հիմք ընդունելով պետության կողմից որդեգրած բարեփոխումների ու բարելավումների ռազմավարությունը:

Խորհրդային դպրոցի կրթական համակարգին հայացք գցելով՝ պետք է նկատել, որ այդ կրթական մոդելի պարագայում սովորողն իր գործունեության, ինքնուրույնության դրսևորման, նախասիրությունների մեջ ինչ-որ առումով կաղապարված էր, սակայն ցավով պետք է նկատել, որ այդպիսի կաշկանդվածության որոշակի դրսևորումներ առկա են նաև այսօր: Ուստի մեր առաջին քայլը սովորողների դերի բարձրացումն է դպրոցում, կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված ուսումնական միջավայրի անվերապահ ապահովումը, ինչում միակարծիք ենք պետության կրթական քաղաքականության հետ:

Փոխվել են ժամանակները, փոխվել է սովորողների մտածողությունը, աշխարհայացքն ու աշխարհընկալումը, նորարարական գաղափարներն ու ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ դարձել են օրվա հրամայական: Այստեղ էլ կիսում ենք ԿԳՄՍ նախարարության գաղափարները, որ առանց ուսուցման աշակերտակենտրոն մոտեցումների, տեխնոլոգիական լուծումների, անհնար է բավարարել մատաղ սերնդի կրթական կարիքները, մոտիվացնել ու ոգևորել նրանց: Դպրոցի մանկավարժներն իրենց մասնագիտական պարտքն են համարում ամեն կերպ մոտիվացնել, խրախուսել, ինքնուրույն և կոլեկտիվ աշխատանքային գործունեության մղել սովորողներին, թույլ տալ, որ սովորողները համաչափ

մասնակցեն դասերին, նախագծեն, հորինեն, բացահայտեն: Թերևս, հենց վերը բերվածով է պայմանավորված կրթական համակարգի արդիականացումն ու թարմացումը, համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին: Նկատել է պետք, որ այս ճանապարհին դպրոցն ունի լրջագույն կարիքներ, անբավարար միջոցներ, մարդկային ռեսուրսի կարիք: Սրանք մարտահրավերներ են, որոնք պահանջում են անվերապահ կատարում, քանի որ առանց նորարարական հայացքների, դպրոցը չի կարող զարգանալ, առաջ գնալ, որակ ապահովել:Ներկայիս բարեփոխումների համատեքստում հանրակրթական պետական և առարկայական նոր չափորոշիչները սահմանում են նոր կարողունակությունների համակարգ սովորողների համար, ինչը ենթադրում է, որ ուսումնական գործընթացում գիտելիքահեն բաղադրիչներին գալիս են լրացնելու կարողունակահեն բաղադրիչները: Համաձայն չափորոշչային պահանջների՝ ոչ միայն ուսուցիչներն են զինվում համապատասխան մեթոդական ու մանկավարժական հմտություններով, կրթական նորարարություններով, այլ նաև գնալով փոխվում է աշակերտի դերը դասին՝ դառնալով ավելի կենտրոնական ու մասնակցային:

Ամբողջացնելով մեր միտքը՝ նկատենք, որ ամբողջապես կիսում ենք բարեփոխումների տրամաբանությունը և պատրաստ ենք համատեղ ուժերով կառուցել նոր ու որակյալ կրթական համակարգ:

3.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

Որակյալ, հասանելի, աջակցող ուսումնական միջավայր ունենալն այսօր գերխնդիր է դարձել մեզ համար: Անշուշտ, արվում է ամեն ինչ՝ ռեսուրսների ու միջոցների պակասը լրացնելու համար, սակայն դա ստացվում է ոչ ամբողջությամբ և ոչ լիարժեք: Դպրոցն ունի ենթակառուցվածքների լրջագույն պակաս, ինչը մեծ դժվարություններ է ստեղծում ուսումնադաստիարակչական աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու համար: Դպրոցի սպորտդահլիճի և հանդիսությունների սրահի վերանորոգումը մեծագույն ձեռքբերում էր, ուստի լիահույս ենք, որ դրանք իրապես ծառայելու են իրենց նպատակին՝ ստեղծելով սպորտային ու մշակութային նոր ուղղություններ, խմբակներ, աշխուժացնելու են

համայնքի կյանքը: Դիտարկենք ենթակառուցվածքների պակասով պայմանավորված այն հիմնախնդիրներն, որոնց լուծումը դպրոցի համար կարևոր նշանակություն ունեն:

1.Համակարգչային սենյակի վերանորոգում գույքի, տեխնիկական միջոցների թարմացում

Համակարգչային ռեսուրսի անբավարությունն ու անսարքությունը լրջագույն խնդիրներ է ստեղծում թե' ուսուցչական կազմի մատենավարական աշխատանքների իրականացման համար, թե' ՏՀՏ-ների կիրառմամբ դասեր պլանավորելիս: Այդ բացը հատկեպես նկատելի է ԹԳՀԳ ուսումնական առարկայի դասագործընթացի կազմակերպան և բնագիտական առարկաների դասավանդման շրջանակներում առցանց գիտափորձերի և լաբարատոր աշխատանքներ իրականացնելիս: Ուսուցիչները նախապես պայմանավորվում են և ըստ անհրաժեշտության օգտագործում համակարգիչները, պրոեկցիոն սարքը, ինչը խանգարում է ուսումնական ընթացքի համընդհանուր տեխնոլոգիականացմանը:

2.Բնագիտական առարկաների լաբորատորիայի վերանորոգում, սարքերի և ուսումնական նյութերի թարմացում, ձեռքբերում

Պայմանավորված այն հանգամանքով, որ դպրոցի բնագիտական լաբորատորիան ունի նյութատեխնիկական բազայի, սարքավորումների պակաս, ֆիզիկա, քիմիա, ուսումնական առարկաների դասավանդման շրջանակներում իրականացվող լաբորատոր փորձերը հաճախ անց են կացվում առցանց եղանակով: Սակայն պետք է նկատել, որ այս պարագայում նույնպես տեխնիկական միջոցների ոչ բավարար քանակը լրջագույն խոչընդոտ է հանդիսանում դասն արդյունավետ վարելու համար: Ուստի այս պարագայում նույնպես պետք է առաջնահերթություն համարել թե' լաբորատորիայի հավուր պատշաճի կահավորումն ու զինումը, թե' համակարգիչների բազայի թարմացումը:

3.Ճաշարանի հիմնախնդիր

Ցավով պետք է նշել, որ դպրոցը չունի ճաշարան, ուստի նախակրթարանի սաներին և տարրական դպրոցի սովորողներին տրամադրվում է չոր սնունդ: Մեր համոզմամբ՝

սա կարևոր բացթողում է և կարիք ունի առաջնահերթ լուծման, ուստի թե՝ կառավարման խորհրդի նիստերին, թե՝ լիազոր մարմինների հետ համագործակցության ընթացքում նշված հիմնախնդիրը մեր կողմից մշտապես բարձրաձայնվում է:

4. Ապահով և անվտանգ բակ

Դպրոցամերձ բակը մշտապես խնամվում և մաքրվում է սովորողների և աշխատակազմի ջանքերով, այդուհանդերձ կարիք կա դպրոցի տարածքը պարսպապատելու, որպեսզի ապահովվի առավել անվտանգ միջավայր սովորողների համար: Նկատենք, որ սույն կարիքի բավարարումը ևս դպրոցի համար առաջնահերթություն է, ուստի զարգացման ծրագրի մեջ անդրադարձել ենք դպրոցի պարսպապատման հիմնահարցի՝ իրատեսական ժամկետում և արդյունավետ լուծմանը:

5.ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ուսումնական հարմարավետ պայմանների ստեղծում

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլորի հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ անձանց համար: Ներառական կրթության նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար իրենց ընդունակություններին, կարողություններին, առողջությանը համարժեք ուսումնական միջավայր ապահովելն է, նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքին պատրաստվածության համար հնարավերություններ ստեղծելը: Հենց այս համատեքստում է, որ մեծագույն պատասխանատվություն է դրված բոլոր մանկավարժական աշխատողների վրա՝ ապահովելու համակեցության, հանդուրժողականության, համագործակցության որակներով օժտված, մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները հարգող, մարդասեր, քաղաքակիրթ, բարոյամշակութային արժեք ունեցող անձի ձևավորման համար աջակցող և ապիով

կրթական միջավայր: Դպրոցը կարևորում է ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ուսումնական անվտանգ, ապահով, հարմար և հասանելի միջավայրի ապահովումը, ուստի այս ուղղությամբ նույնպես գործուն քայլեր են նախանշված զարգացման ծրագրում, այն է՝ ռեսուրս-դասարանի հիմնում, թեքահարթակների կառուցում, ՏՄԱԿ-ի և ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների հետ համագործակցության սերտացում: Այս համատեքստում դպրոցն առաջնորդվում է նաև՝

- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է. «Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար հաշմանդամություն ուեցող երեխաների՝ մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով օգտվելը[11]»:
- ՀՀ-ի կրթության բնագավառում օրենսդրության խնդիրներից է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը[12]»:
- Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ «Ներառական կրթությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է[13]»:

6. Մարդկային ռեսուրսի զարգացում, մասնագիտական որակների բարելավում

Հանրակրթական համակարգի շարժիչ ուժը մարդկային ռեսուրսն է՝ ի դեմս մանկավարժական աշխատողների: Այս համատեքստում դպրոցը կարևոր է համարում, որ յուրաքանչյուր ուսուցիչ ժամանակին և արդյունավետ կերպով կատարի իր մասնագիտական պարտավորությունները, քաջատեղյակ լինի իր իրավունքներին, ունենա մարդկային և մասնագիտական բարձր որակներ, դրսևորի հանդուրժողականություն, բարեվարքություն, պահպանի ներքին կարգապահական

[11] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, հոդված 7:
[12] «Կրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 2:
[13] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:

կանոնները: Այդուհանդերձ, այստեղ նույնպես առկա են խնդիրներ: Որոշ ուսուցիչներ դժվարությամբ են ընդունում կրթական բարեփոխումներով պայմանավորված փոփոխությունները, տրտնջում են, չեն կողմնորոշվում որոշ հարցերում: Հենց այստեղ է, որ դպրոցն ընդառաջ է գնում ուսուցչի դժվարությունները համատեղ հաղթահարելուն: Տնօրենի, ուսումնական գծով տնօրենի տեղակալի, մ/մ նախագահի աջակցությունը հասանելի է բոլոր ուսուցիչներին: Մեթոդական ուղղորդումները, քննարկումները, փորձի փոխանակումը մեծապես կարողանում են մեղմել հնարավոր դժվարությունները, մինչև, որ ուսուցիչները կհմտանան իրենց նոր գործառույթներին, ուսումնական նորություններին:

4.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատումը առանցքային դերակատարում ունի վերջինիս կառավարման արդյունավետության բարձրացման համար: Այս համատեքստում կարևոր է, որ յուրաքանչյուր գործողության առանձնահատկության համապատասխան սահմանվեն գնահատման չափանիշները, որոնք հնարավորություն կտան իրատեսորեն գնահատել սահմանված նպատակների, դրանցից բխող խնդիրների և ակնկալվող վերջնարդյունքների լիարժեքությունն ու իրատեսությունը: Զարգացման ծրագրի գնահատումը նպատակը ոչ միայն գնահատականներ տալն է, այլ մշտադիտարկումը, իրավիճակի ներկայացումը, ինչը հնարավորություն կտա ապահովել հետադարձ կապ՝ վեր հանելով հնարավոր թերությունները, բացթողումները, անճշտություններն ու անհամապատասխանությունները:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական, որոնց չափանիշները և իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ներքին գնահատումը ուսումնական հաստատության կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները: Արտաքին գնահատումը կատարվում է

ուսումնական հաստատության գիտությամբ՝ անկախ կազմակերպության կողմից: Արտաքին գնահատմանը մասնակցում են ծնողները, սովորողները, կրթության պետական և տարածքային կառավարման լիազորված մարմինները, տեղական ինքնակառավարման մարմնի և ուսումնական հաստատության ներկայացուցիչները: Ուսումնական հաստատության արտաքին գնահատումն իրականացվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի և հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին շրջանավարտների համապատասխանության հիման վրա»[14]:

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը պետք է վերաբերի բոլոր ռազմավարական նշանակության ոլորտներին, որոնք են

4.1 Կրթության որակի, ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման գնահատման չափանիշներ

Ներկայիս կրթական համակարգը գնում է ինստիտուցիոնալ բարեփոխումների ճանապարհով՝

- ներդրվել են հանրակրթական պետական և առարկայական նոր չափորոշիչներ, որոնց համաձայն գիտելիքահեն կրթությունը վերաձևակերպվել է կարողունակահեն կրթության
- արդիականացվում են ուսումնական դասագրքերը, ուսումնաօժանդակ նյութերը
- տեխնոլոգիաները դարձել են ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչ
- ուսուցչակենտրոն դասերին գալիս են փոխարինելու սովորողակենտրոն դասերը
- ներդրվոլ են սովորողների գնահատման այլընտրանքային և նորարարական մոտեցումներ

[14] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 34:

- ուսումնական ընթացքը համալրվել է ակտիվ, ինտերակտիվ, համագործակցային, պրոբլեմային ուսուցման մեթոդներով, նախագծային ու հետազոտական աշխատանքներով
- սովորողները պասիվ լսողներից դարձել են դասագործընթացի ակտիվ սուբյեկտներ
- իրականացվում է ներառական կրթություն, որի շրջանակներում հաշվի են առնվում սովորողների անհատական կարիքները:

Այս ամենը այն նախադրյալներն են, որոնք կարող են ապահովել կրթության բարձր որակ, ուստի կրթության որակի, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության գնահատումն ուղիղ համեմատական է վերը բերված գործոնների անվերապահ իրականացմանը:

Մեր համոզմաբ՝ դպրոցի զարգացման ծրագրում կրթության որակի, ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման գնահատման չափանիշների արդյունավետությունը պայմանավորված է ստորև բերված խնդիրների իրատեսությամբ՝

- Հասանելի, մասնակցային ապահով, անվտանգ, ՀՊՉ-ներին համապատասխան ուսումնական միջավայրի ապահովում:
- Սովորողների իրավունքների պաշտպանություն, պարտավորությունների համար պայմանների ապահովում՝ համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի:
- Ուսուցման կազմակերպում՝ ազգային գաղափարախոսության հենքի վրա:
- Մեթոդական և դիդակտիկ նյութերով, ՏՀՏ-ներով հագեցած, մասնակցային դասագործընթաց
- Սովորողների համար առողջ և բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ապահովում:
- Մրցունակ, աշխատունակ, կարողունակ շրջանավարտների պատրաստում:
- Ակադեմիական գիտելիքների խորացում, կարողությունների ձևավորում և զարգացում:

- Քննադատական, վերլուծական, ստեղծագործական մտածողության խթանում:
- Ինքնուրույնության, նախաձեռնողականության, ստեղծագործական մտածողության զարգացում:
- Հուզական ոլորտի զարգացում:
- Անհատական և տարիքային առանձնահատկությունների համապատասխան ուսումնական միջավայրի ձևավորում:
- Առանձնահատուկ կարիքների, օժտվածության հաշվի առնում:
- Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորում, բռնության բացառում:
- Հայրենասիրության, մարդասիրության, ազգային ու համամարդկային արժեքների սերմանում:

4.2 Բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայրի գնահատման չափանիշներ

Բազմակարծության ապահովումը, խոսքի ազատության անվերապահ պաշտպանությունը, բարձր մասնակցայնությունն ու ներառական միջավայրը յուրաքանչյուր դպրոցի համար անկյունաքարային նշանակություն ունի, քանի որ սրանք ժողովրդավարության, մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության առանցքային բաղադրիչներ են. «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը»[15]: Այս համատեքստում կարևոր է, որ դպրոցը որդեգրի այնպիսի աշխատելաոճ և աշխատանքային ռազմավարություն, որը կնպաստի թե սովորողների[16], թե մանկավարժական աշխատողների[17] օրենքով սահմանված իրավունքների պաշտպանությանը: Բազմակարծությունը կնպաստի, որ դպրոցում առավել կարևորվի խորհրդակցական մարմինների դերը, թե՛ սովորողները, թե՛ մանկավարժական աշխատողները կարողանան բարձրաձայնել իրենց մտահոգությունները, հանդես գան առաջարկներով, համագործակցեն միմյանց հետ: Այսպիսի մթնոլորտը միանշանակ

[15] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 3:
[16] Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:
[17] Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 20:

կբարձրացնի նաև մասնակցային միջավայրի քանակական և որակական ցուցանիշները: Սա նաև խոսում է հավասարության սկզբունքի մասին. բոլորի ձայնը լսելի է, որևէ մեկը պասիվ դիրքում չէ:

Շատ կարևոր է նաև ներառական միջավայրի ապահովումը ուսումնական հաստատությունում: Ներառական միջավայրը ենթադրում է, որ աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք-կողքի, նույն դպրոցում և դասարանում, հաշվի են նստում տարբերությունների հետ, ընդունում են դրանք, օգնում ու աջակցում են իրար: Ներառական կրթությունը բավականին դրական է ազդում դրա շահառուների վրա: Փաստացի դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Կրթության կազմակերպման նման գործընթացի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում՝ նաև հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների, օժտված երեխաների կրթություն ստանալու իրավունքի լիարժեք իրացումն է: Այն բավարարում է սովորողների բազմազան կարիքները, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալու հավանականությունը:

ԿԱՊԿՈՒ երեխայի համար աջակցող միջավայրի ապահումը մեր դպրոցում դրված է բարձր հիմքերի վրա: Այս համատեքստում առանցքային դերակատար է ուսուցիչը, ով բազմամասնագիտական թիմի հետ փորձում է ամեն կերպ ապահովել մասնակցային և աջակցող միջավայր ԿԱՊԿ ունեցող սովորողների համար: Նկատենք, որ որոշ դեպքերում սովորողները դժվար են ընդունում իրենցից որոշակիորեն տարբեր այլ սովորողների հետ նույն դասարանում սովորելու հանգամանքը, սակայն մանկավարժահոգեբանական բացատրական աշխատանքները չեն ուշանում. օրինակներով ուսուցումը, խաղերը, զբոսանքներն ու մտերմիկ իրավիճակների հաճախակի ստեղծումը մեծապես նպաստում են դասարանում բարեկամական մթնոլորտի ապահովմանը: Այսինքն՝ որքան հեշտ ստացվի ինտեգրումը, այդքան կշահեն բոլոր սովորողները, դասարանը զերծ կմնա ավելորդ լարվածությունից:

Ուսուցիչները նույնպես բախվում են լրջագույն դժվարությունների, սակայն այս պարագայում իրավագիտակցությունը, պատասխանատվության բարձր զգացումն օգնում է վերջիններիս կատարել իրենց պարտականությունները: Ի վերջո՝ «Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, հանրակրթության հավասար հնարավորությունները»[18]:

Այսպիսով, դպրոցի զարգացման ծրագրում բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայրի գնահատման չափանիշների արդյունավետությունը պայմանավորված է ստորև բերված խնդիրների իրատեսությամբ՝

- Դպրոցի կառավարման գործընթացում ժողովրդավարական սկզբունքների պահպանում, խոսքի ազատություն, տարակարծության ապահովում, հաճախակի քննարկումների, հարցախույզերի, սոց. հարցումների անցկացում մանկավարժական աշխատողների, սովորողների և նրանց ծնողների շրջանում:
- Մասնակցային միջավայրի ապահովում, օտարման հնարավոր դեպքերի բացահայտում, բողոքների և առաջարկությունների հավաքագրման մեխանիզմների ներդնում:
- Հավասարության սկզբունքի ապահովում բոլոր բնագավառներում:
- Ներառական միջավայրի ստեղծում, ոլորտի վերաբերյալ քննարկումների, ճանաչողական զրույցների անցկացում խորհրդակցական մարմինների նիստերի ընթացքում:
- Սովորողների, նրանց ծնողների իրավագիտակցության, սոցիալական և քաղաքացիական պատասխանատվության բարձրացման մեխանիզմների ներդնում:

[18] [18] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք հոդված 5, կետ 2.1:

- Ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում:

4.3Աշխատակազմին արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ապահովման գնահատման չափանիշները

Ցանկացած լավ և որակյալ կատարված աշխատանք կարիք է զգում գնահատանքի, խրախուսման: Կրթության բնագավառում նույնպես կարողունակ, որակական և քանակական բարձր ցուցանիշներ ապահովող աշխատակիցները, այդ թվում մանկավարժական աշխատողները պետք է անպայման գնահատվեն ու խրախուսվեն: Այդ խրախուսանքն ավելին անելու, մոտիվացվելու հզոր ներուժ ունի: Դպրոցը քաջ գիտակցում է այս ամենն ու ընդառաջ է գնում արժանավոր աշխատակիցների խրախուսմանն ու արժևորմանը: Նորարար ու նախաձեռնող ուսուցիչների հաղթանակներն ու ձեռքբերումները բարձրաձայնվում են խորհրդի ու խորհրդակցական մարմինների նիստերին, վերջիններս ստանում են պատվոգրեր, շնորհակալագրեր: Վատակավոր մանկավարժների համար դպրոցում անց են կացվում ցերեկույթներ, խրախուսանքի միջոցառումներ: Այսպես դաստիարակվում են նաև սովորողները, հասկանում, որ լավ ու արժանավոր գործերը մշտապես գնահատվում են: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը նույնպես սահմանում է մանկավարժական աշխատողին խրախուսելու անհրաժեշտությունը. «Մանկավարժական աշխատողների համար ուսումնական հաստատության, նրա հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր»[19]: Ինչպե՞ս է դպրոցն ընտրում, թե ո՞ր ուսուցիչն է արժանի խրախուսման: Աներկբայորեն պետք է պնդել, որ բոլոր ուսուցիչներն էլ իրենց գործի նվիրյալներն են, սակայն առանձնակի ուշադրության են արժանանում նորարար, ստեղծարար, զարգացող, ակտիվ ու նախաձեռնող

[19] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 2.3:

ուսուցիչները, ովքեր կարող են սակավ ռեսուրսներով քարից հաց քամել, անցկացնել պատկերավոր և մասնակցային դասեր, ապահովել որակական և քանակական բարձր ցուցանիշներ՝ բարձր պահելով դպրոցի հեղինակությունը:

Այսպիսով, դպրոցի զարգացման ծրագրում աշխատակազմին արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ապահովման գնահատման չափանիշների արդյունավետությունը պայմանավորված է ստորև բերված խնդիրների իրատեսությամբ՝

- Կազմակերպման և ղեկավարման մեխանիզմների մշակում, որը պետք է ուղղված լինի մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացմանը:
- Նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մեթոդական աշխատանքների որակական բարելավումը:
- Դպրոցի աշխատազմին ոգևորելու, խրախուսելու մեխանիզմների ներդնում:
- Մանկավարժական աշխատողների ինքնակրթման, ինքնազարգացման համար համապատասխան միջոցների ապահովում:

4.4 Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի,գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներ

Դպրոցի արդյունավետ կառավարումն իրենից ենթադրում է բաց, թափանցիկ ու մասնակցային համագործակցություն խորհրդի, խորհրդակցական մարմնների, գործընկերների և համայնքի հետ: Նշված սուբյեկտների ներուժի, ռեսուրսների մեկտեղումն ու անշահախնդիր համագործակցությունը իր նպաստը կբերի՝ զարգացման ծրագիր առավել իրատեսական դարձնելուն: Դպրոցի զարգացման ծրագրում նախանշված դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա

ուսուցման գնահատման չափանիշների արդյունավետությունը պայմանավորված է ստորև բերված խնդիրների իրատեսությամբ՝

1/Կառավարման խորհրդի դերի բարձրացումը դպրոցի հետ համագործակցության արդյունքում

Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները հետևյալ ուղղություններով՝

- Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում:
- Կրթության պետական կառավարման մարմնին, լիազորված մարմին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- Դպրոցի շենքի շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:
- Ֆինանսական եռամսյակային հաշվետվությունների քննարկում, առաջարկությունների իրականացման համար միջոցների ներդրում:
- Դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման համար պայմանների ստեղծում:

2/Ծնողական խորհրդի հետ համագործակցության բարելավում

Սովորողների կրթության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ձեռք բերել փոխադարձ վստահությանը: Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում՝

- Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում:
- Ներգրավում արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին:
- Ծնողական խորհուրդ-Կառավարման խորհուրդ-Մանկավարժական խորհուրդ կապի ապահովում:
- Աջակցություն ծնողական խորհուրդի աշխատանքի կազմակերպմանը:

- Սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին ծնողների մասնակցության ապահովում:
- Ծնողներին տրվող մանկավարժական խորհրդատվության արդյունավետ մեխանիզմների ներդնում:
- Ծնողական համայնքում բարեվարք ու կարուցողական համագործակցության խթանում:
- Աջակցություն ընտանիքին՝ օրենքով սահմանված կարգով:

3/ Հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդների ձևավորում

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար մեծ դեր ունեն հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդները այս ուղղությամբ իրականացվելիք գործողություններից են՝

- Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել հոգաբարձուների խորհուրդ՝ խորհրդի կազմում ընդգրկելով դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների:
- Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը:
- Հոգաբարձուների խորհուրդը պետք է գտնի բարերարներ, ովքեր ներդրումներ և նվիրատվություններ կկատարեն: Գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ և մատչելի՝ բարերարի, դպրոցի և տեղական ինքնակառավարման ու պետական մարմինների համար:
- Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել շրջանավարտների խորհուրդ՝ խորհրդի կազմում ընդգրկելով դպրոցի նախկին ակտիվ ու նախաձեռնող շրջանավարտներին՝ ներգրավելով վերջիններիս կազմակերպչական և կամավորական աշխատանքներում:

Նկատենք, որ վերը բերված երկու խորհուրդներն էլ կարող են իրենց նպաստը բերել դպրոցի համակողմանի զարգացմանը: Դպրոցի մի շարք խնդիրների և

կազմակերպչական հարցերի լուծման նպատակով, զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար մեծ նշված խորհուրդների գործարկումը կարող է լրացուցիչ օգնության ձեռք հանդիսանալ դպրոցի համար:

4/ Արտադպրոցական և երկարօրյա ուսուցում

Արտադպրոցական ուսուցումն ունի մեծ նշանակություն: Այն նպաստում է սվորողների վերառարկայական հմտությունների զարգացմանը, մտածողության տարատեսակների և սովորողների աշխարհաճանաչողության ձևավորմանը: Դպրոցն հնարավորության դեպքում մշտապես կիրառում է արտադպրոցական ուսուցման տարատեսակները: Ինչ վերաբերում է երկարօրյա ուսուցմանը, դեռևս մանկավարժական այս ռեսուրսը չի կիրառվում դպրոցում, սակայն սույն զարգացման ծրագրով նախատեսում ենք այս հիմնախնդիրը նույնպես դարձնել առաջնահերթություն, սովորողների գերակա շահ:

4.5 Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշներ

Երեխայի սոցիալականացումը տեղի է ունենում հիմնականում դպրոցում: Վերջինս այստեղ է յուրացնում օրինեկելի վարքագիծ, սովորում է լինել մարդասեր, հանդուրժող ու բարեվարք: Սակայն նկատենք, որ դպրոցականներին անպայման պետք է պաշտպանել հնարավոր հալածանքից, բռնության, օտարման ու խտրականության դրսևորումներից: Այս կարևոր պարտավորությունը հավասարաչափ կիսում են դպրոցի վարչական և մանկավարժական բոլոր աշխատողները: Աներկբա է, որ անառողջ մթնոլորտը, դպրոցական բռնությունը, բուլինգը կարող են խաթարել թե' սովորողի հոգեկան առողջությունը, թե' լրջագույն սպառնալիք դառնալ ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար: Այս համատեքստում դպրոցը պետք է մշակի կանխարգելման համալիր միջոցառումներ՝ բոլոր սովորողների համար ապահովելով անվտանգ և ապահով ուսումնական միջավայր: «Կրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից է կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու

առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը»[20]: Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը, նրանց մասնակից դարձնել դպրոցի շրջանակներում որոշումների կայացմանը, օժտել վերջիններիս մշտադիտարկման ռեսուրսներով՝ հնարավոր բռնություններին ու խատրականության դրսևորումներին արագ արձագանքելու համար: Դպրոցի զարգացման ծրագրում նախանշված հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշների արդյունավետությունը պայմանավորված է ստորև բերված խնդիրների իրատեսությամբ՝

- Աշակերտական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացում՝ վերջինիս մշտադիտարկման ռեսուրսներով օժտելու միջոցով:
- Ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում աշակերտական խորհրդի դերի արժևորում՝ վերջինիս տալով թույլատրելի ինքնավարություն:
- Այնպիսի ինքնավարության ապահովում, որը կարտահայտվի աշակերտների ինքնադրսևորմամբ, կարծիքի ազատ արտահայտմամբ, օտարման, խտրականության բացառմամբ ու կանխարգելմամբ:
- Աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք համագործակցային հարաբերությունների ամրապնդում:
- Հնարավոր բուլերների և բուլինգի զոհերի հետ մանկավարժական և հոգեբանական աշխատանքների իրականացում:
- Սովորողների, նաև ԿԱՊԿ ունեցող սովորողների իրավունքների, պատվի արժանապատվության անվերապահ պաշտպանություն:
- Թիրախային դաստիարակչական աշխատանքների իրականացում վարքի խանգարումներով սովորողների հետ:

№	Գնահատվող ոլորտ	Գնահատական	Արդյունքի գնահատման չափանիշ
1	Շենքային պայմաններ, նյութատեխնիկական բազա	5	Գերազանց արդյունք
		4	Լավ արդյունք
		3	Միջին արդյունք
		0-2	Արդյունքի բացակայություն/ վատ արդյունք

[20] «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, կետ 1:

2	Կրթության որակ	5	Գերազանց արդյունք
		4	Լավ արդյունք
		3	Միջին արդյունք
		0-2	Արդյունքի բացակայություն/ վատ արդյունք
3	Անձնակազմի արժևորում, խրախուսում, ինքնակրթության միջավայրի ձևավորում	5	Գերազանց արդյունք
		4	Լավ արդյունք
		3	Միջին արդյունք
		0-2	Արդյունքի բացակայություն/ վատ արդյունք
4	Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ապահովում	5	Գերազանց արդյունք
		4	Լավ արդյունք
		3	Միջին արդյունք
		0-2	Արդյունքի բացակայություն/ վատ արդյունք
5	Կառավարման և խորհրդակցական մարմինների հետ համագործակցություն	5	Գերազանց արդյունք
		4	Լավ արդյունք
		3	Միջին արդյունք
		0-2	Արդյունքի բացակայություն/ վատ արդյունք
6	ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, շահառու կազմակերպությունների հետ համագործակցություն	5	Գերազանց արդյունք
		4	Լավ արդյունք
		3	Միջին արդյունք
		0-2	Արդյունքի բացակայություն/ վատ արդյունք
7	Արտադպրոցական և երկարօրյա ուսուցման կազմակերպում	5	Գերազանց արդյունք
		4	Լավ արդյունք
		3	Միջին արդյունք
		0-2	Արդյունքի բացակայություն/ վատ արդյունք
8	Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում	5	Գերազանց արդյունք
		4	Լավ արդյունք
		3	Միջին արդյունք
		0-2	Արդյունքի բացակայություն/ վատ արդյունք

5. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ, ԴՐԱՆՔ ՄԵՂՄՈՂ ԿԱՄ ՉԵԶՈՔԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Դպրոցի զարգացման ծրագրում հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է, քանի որ, առանց ռիսկերի հաշվառման ամենալավ մշակված դպրոցի զարգացման ծրագիրն անգամ դժվար է իրականացնություն դարձնել: Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացմանը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են, դրանց ոչ ճշգրիտ կանխատեսումը կարող է հանգեցնել դպրոցի զարգացման առանձին ոլորտներում պլանավորված աշխատանքների թերացմանը և զարգացման ծրագրի՝ այդ ուղղությամբ նպատակադրված խնդիրների և գործողությունների իրականացման արդյունավետության անկմանը: Դպրոցի զարգացման ծրագրում նույնպես հնարավոր ռիսկերի պլանավորումը դպրոցի զարգացման գործընթացների արդյունավետության ապահովման համար խիստ կարևոր է: Առանց ռիսկերի կանխատեսման, զարգացման ծրագրի իրականացման առանձին փուլերում և ուղղություններում ձախողվում է ակնկալվող գործողությունների կատարողականը, սահմանված վերջնարդյունքները չեն ապահովվում: Միաժամանակ, ծրագրի հնարավոր ռիսկերը առավել տեսանելի են դառնում ծրագրի գործողությունների մշակման, դրանց իրականացման ժամանակացույցի և պատասխանատուների պլանավորման փուլերում: Ծրագրի նպատակադրումների իրագործումը խոչընդոտող ռիսկերը բազմաբովանդակ են և դրանք, ըստ ազդեցության ուղղությունների, կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- Կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության թերացումներ և հնարավոր բացասական ազդեցություններ:
- Կադրային ապահովման, համակազմի մասնագիտական պատրաստվածության բացեր:
- Նյութատեխնիկական բազայի սահմանափակ հնարավորություններ:
- Ուսումնական անհրաժեշտ միջավայրի ձևավորման դժվարություններ:
- Նորամուծությունների ներդրման, նորարարությունների և բարեփոխումների համաչափ ինտեգրման խնդիրներ:

- Ֆորս մաժորային իրավիճակներում (բնական և տեխնածին աղետներ, համավարակներ, անվտանգային իրավիճակներ, պատերազմներ և այլն) անհրաժեշտ գործունեության ապահովման խնդիրներ:

Ռիսկերը պլանավորելիս հետո պետք է սահմանել դրանց ազդեցության նվազեցմանը, չեզոքացմանն ուղղված գործողությունները, որոնք մարդկային և նյութական ռեսուրսների ուղղորդման և հավաքագրման գործողություններն են՝ միտված չեզոքացնելու սահմանված նպատակներին հասնելու հնարավոր խոչընդոտները:

№	Ռիսկեր	Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ու չեզոքացմանն ուղղված գործողություններ
1.	Տեխնիկական միջոցների անբավարարություն	Ձեռք բերել համակարգիչներ, օժանդակ սարքեր, էլ. գրատախտակներ
	Նորարար, նախաձեռնող մանկավարժների պակաս, պահպանողական հայացքներով մանկավարժների առկայություն	Մշակել մանկավարժական աշխատողների խրախուսման, վերջիններիս մոտիվացնելու արդյունավետ մեխանիզմներ
2.	Սովորողների սովորելու մոտիվացիայի պակաս, առաջադիմության, մրցակցային միջավայրի ցածր մակարդակ	Ոգևորել սովորողներին, անցկացնել մասնակցային և ակտիվ դասեր, ինքնուրույն, նախագծային աշխատանքներ, կազմակերպել ճանաչողական այցեր, էքսկուրսիաներ, ոչ ֆորմալ դասեր
1	Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչընդոտներ	Մանկավարժներին ընդգրկել վերապատրաստման դասընթացներին՝ մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:
2	Դպրոցի ֆինանսական սահմանափակ	Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքբերում, հոգաբարձուների խորհրդի

	հնարավորություններ	ձևավորում, գտնել հովանավորներ, բարերարներ:
3	Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն	ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում,լրացուցիչ միջոցների հայթայթում
4	Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն:	Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը
	Համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն	Հաճախակի անցկացնել համայնքային նշանակության միջոցառումներ, ակտիվացնել համայնքային բլոգի աշխատանքները
	Շահառու կազմակերպությունների հետ ոչ բավարար չափի համագործակցություն	Ընդլայնել շահառու կազմակերպությունների քանակը, խորացնել վերջիններիս հետ համագործակցային հարաբերությունները
	Խորհրդակցական մարմինների ոչ արդյունավետ աշխատանք	Մշակել արդյունավետ մեխանիզմներ խորհրդակցական մարմինների դերի բարձրացման և արդյունավետ աշխատանքի համար, խրախուսել ակտիվ անդամներին

Ընդհանուր առմամբ, դպրոցի զարգացումն ապահովելու, սահմանված նպատակներին հասնելու և ընդհանուր ուսումնական բարենպաստ միջավայր

ձևավորելու համար կարևոր ենք համարում անդրադառնալ նաև հնարավոր ռիսկերի չեզոքացմանն ուղղված ներքոբերյալ գործողություններին ևս՝

- ուսումնամեթոդական և գեղարվեստական գրականության պաշարի համալրում,
- առարկայական կաբինետների ձևավորում,
- ,ժամանակակից տեխնիկական միջոցներով կահավորված դասարանների համալրում և հնարավորությունների ընդլայնում,
- ԿԱՊԿՈՒ սովորողների համար ֆիզիկական միջավայրի ձևավորում և անհատական /խելամիտ/ հարմարեցումների ապահովում,
- անհրաժեշտ գույքով դասասենյակների կահավորում,
- հրաձգարանի ստեղծում,
- երկարօրյա ուսուցման կազմակերպում,
- խմբակների թվի ավելացում,
- ռազմամարզական վարժական հրապարակների ստեղծում, դպրոցական մարզադաշտի կահավորում և գործարկում:

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Կրթության ոլորտում ծառայությունների որակի վերահսկողությունը կարևոր նշանակություն ունի կրթական հաստատություններում մատուցվող կրթության արդյունավետության բարձրացման համար: Պատահական չէ, որ ներկայումս ներդրվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի թափուր տեղը համալրելու նոր կարգ, համաձայն որի՝ տնօրենի հավակնորդը ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է ուսումնական հաստատության զարգացման իր տեսլականը՝ նպատակներ, խնդիրներ, գործողություններ, ժամկետներ, ռիսկեր, պատասխանատուներ, ժամանակացույց: Այս ամենն ինքնանպատակ չէ և աներկբայորեն կարիք ունի լրջագույն վերահսկողության, որպեսզի ծրագրով նախատեսված յուրաքանչյուր բաղադրիչ չմնա թղթի վրա, մշտադիտարկվի, վերահսկվի և գնահատվի: Վերահսկողությունը նաև արդյունավետ գործիք է հաստատության մանկավարժական ու վարչական աշխատողների

պատասխանատվության բարձրացման, հաաշվետվողական հմտությունների զարգացման համար: Ժամանակին և դիպուկ կատարվող վերահսկողությունն ունի նաև մեկ այլ կարևոր գործառույթ, այն է՝ ժամանակին արձանագրել բացթողումներն ու թերացումները, որոնք կարող են դառնալ իրական մարտահրավերներ, եթե ժամանակավրեպ հայտնաբերվեն: Նկատենք, սակայն, որ արդյունավետ ու անաչառ վերահսկողական մեխանիզմ ունենալու համար հարկավոր է բացառել դրա զսպող կամ կաղապարող ներգործությունը, վերահսկողությունը պետք է դառնա կառուցողական համագործակցության, համատեղ աշխատելու, խնդիրները հայտնաբերելու և չեզոքացնելու գործիք:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է ուսումնական հաստատության կառավարման խորհուրդը՝ տարեկան առնվազն երկու անգամ, յուրաքանչյուր կիսամյակի վերջում: Զարգացման ծրագրի յուրաքանչյուր գործողության համար մշակվում են վերահսկողության մեխանիզմներ, սահմանվում հաշվետվության ձևեր, ժամանակացույց, որոնք ներկայացվում են խորհրդի հաստատմանը: Ընդ որում՝ յուրաքանչյուր տարի անհրաժեշտ է Խորհրդին ներկայացնել զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն, որը պետք է ներառի ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման վերաբերյալ չափելի տեղեկատվություն: Խորհրդին ներկայացվում է նաև տարեկան աշխատանքային պլանի ընտրված ժամանակահատվածի համար հաշվետվություն:

Դպրոցի խորհրդի կողմից զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության գործընթացը ոչ թե նպատակ ունի իրացնելու դպրոցի կառավարման այդ մարմնի ֆորմալ իրավունքը, այլ իրականում դպրոցի խորհուրդն իր խորհրդատվական աջակցությամբ, առկա ռեսուրսների ճիշտ ուղղորդմամբ և այլ աշխատանքներով պետք է աջակցի տնօրենին ԴԶԾ-ի իրականացման բոլոր փուլերում: ԴԶԾ-ի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դրա համար անհրաժեշտ է ԴԶԾ-ի նպատակադրումները ամբողջությամբ արտացոլել դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ ԴԶԾ-ով սահմանված ժամանակացույցին

համապատասխան: Այսպիսով՝ վերահսկողության հիմնական մեխանիզմը զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունն է, որը ներառում է համապարփակ տեղեկատվություն յուրաքանչյուր գործողության իրականացման ուղղության կատարված աշխատանքների, զարգացումների, ինչպես նաև գործողության չկատարման կամ մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառների վերաբերյալ: Տարեկան հաշվետվությունը ներառում է զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվություն:

6.1 Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարողականի հաշվետվության օրինակներ

1.Ուսհաստատության շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

№	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշումներ
1	Ֆիզիկական վիճակի բարելավում, նյութատեխնիկական բազայի ձեռքբերում						
2	Ապահով, անվտանգ, հարմարավետ միջավայրի ձևավորում						
3	Ճաշարանի կառուցում						
4	Սպորտդահլիճի, հանդիսություններ ի սրահի վերանորոգում						
5	Պարսպապատում, ջեռուցման համակարգ						

2. Կրթության որակի բարելավում

№	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշումներ
1	Ուսուցիչների մասնագիտական և մեթոդական հմտությունների զարգացում						
2	ՀՊՉ-ին համապատասխան ուսումնական միջավայր						
3	Տարակարգ ունեցող, կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչներ						
4	Մասնակցային, մեթոդական ու տեխնոլոգիական միջոցներով դասերի վարում						
5	Առաջադիմող սովորողներ						
6.	ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական կարիքների բավարարում						
7	Համագործակցությունը մանկավարժների միջև						
8	Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթություն, գնահատման այլընտրանքային ձևեր						

9	Օլիմպիադաներում ունեցած ձեռքբերումներ						

3. Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը

№	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշումներ
1	Տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցություն						
2	Կառավարման խորհրդի այցերը հաստատություն						
3	Հաշվետվողականություն դպրոցի կողմից						
4	Մշտադիտարկում Կառավարման խորհրդի կողմից						

4. Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

№	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշումներ

1	ՏԻՄ-համայնք-դպրոց համագործակցություն						
2	Շահառու կազմակերպություններ- դպրոց համագործակցություն						
3	Ծնողական խորհուրդ-դպրոց համագործակցություն						
4	Աշակերտական խորհուրդ- դպրոց համագործակցություն						
5	Առարկայական մասնախբերի աշխատանք						
6	Մանկավարժական խորհրդի աշխատանք						
7	Հոգաբարձուների խորհրդի ստեղծման աշխատանքներ						
8	Շրջանավարտների խորհրդի ստեղծման աշխատանքներ						
9	Կրթության կառավարման մարմիններ- դպրոց համագործակցություն						

5. ուսումնական նպատակով կատարված ծախսեր

№	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում գործողությունը	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ	Նշումներ

					չկատարման պատճառները	կատարելու մասին առաջարկու-թյուններ	
1	Ֆինանսական միջոցների կառավարում						
2	Ֆինանսական միջոցների նպատակայի բաշխում						
3	Ֆինանսական միջոցների խնայում						
4	Այլընտրանքայի ն ֆինանսական միջոցների ներգրավում						

6. Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում, աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների ապահովում

№	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշումներ
1	Տարակարծությունը, խոսքի իրավունքը դպրոցում						

2	Հավասարության, մասնակցելիության մակարդակը դպրոցում						
3	Ներառական միջավայրը դպրոցում						
4	Անձնակազմի խրախուսումը, արժևորումը դպրոցում						
5	Ինքնակրթության հնարավորություններ ը դպրոցում						

7.Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելում

№	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշումներ
1	Սովորողների իրավունքների պաշտպանությունը դպրոցում						
2	Բուլինգի, օտարման բացահայտումն ու կանխարգելումը դպրոցում						
3	Խտրական վերաբերմունքի բացառումն ու կանխարգելումը դպրոցում						

4	Հավասարության սկզբունքի պահպանումը դպրոցում						
5	Սովորողներին տրվող մանկավարժահոգեբանական աջակցությունը դպրոցում						

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. Կրթության մասին» ՀՀ օրենք:
3. «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենք:
4. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա:

5. «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 76:
6. ՀՀ Կրթության և գիտության նախարարի՝ 17 մայիսի 2011 թ. N 571-Ն հրաման:
7. ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում»:

ՀԱՎԵԼՎԱԾ